

ԱՇԱԿԵՐՏԻ ՅՈՒԹԱՑԵՑՐԸ

Ստանահին, 27 յուլիսի, շաբաթ:

Առաւօտեան ժամի 4 էր: Արշալոյսը դեռ նոր էր ծագում և երկինքը կարծես թէ հրդեհուել. էր աստղերը դեռ բոլորովին չէին անյայտացել, մի քանիսը նրանցից դեռ փայլում էին երկնակամարի վրայ: Բնութիւնը կենդանացել էր և գիւղացին էլ սկսել իր գործը:

Այդ ժամին եթէ մէկը մտնէր մեր սենեակը՝ անսովոր կենդանութիւն և իրարանցումն կնկատէր: Մէկը արեւիներն էր կապում, երկրորդը վերաբեկումն ծալում, երրորդը գլխարկի արևակալ վզնոցն ամրացնում, չորրորդը ճանապարհորդական պարկի միջի իրեղէններն էր նորից գիտում և այլն:

Ինչն էր առիթ տուել այդ իրարանցման:

Այդ օրը պէտք է սկսուէր մեր առաջին ճանապարհորդութիւնը Լոռուայ գաւառում. այդ ճանապարհորդութեամբ մենք պէտք է ցոյց տայինք՝ թէ գիտենք կարգ ու կանոն պահպանել և աշակերտական նստաբաններից դուրս ևս ընկերական կեանք վարել: Ահա այդ բարոյական պարտաւորութիւնն էր, որ մեզ հարկադրում էր ամեն կերպ հոգալ՝ որ ոչ մի անկարգութիւն, ընդհանուր կանոնների զեղծումն չլինի մեր կողմից: Այդ էր պատճառը, որ թէև նախորդ երեկոյեան մեր բոլոր ճանապարհորդական իրեղէններն արդէն կարգաւորել էինք, բայց այնուամենայնիւ մեղմից ամեն մէկը տեղից վերկենալով՝ իր պարտաւորութիւնն էր համարում երկրորդ անգամ աչքի անցնել իրեղէնները և տեսնել թէ արդեօք ամեն բան իր տեղն է: Թէպէտ մեր ընկերներից մի քանիսը սովորութիւն էին արել՝ պահանջուած կարգապահութեան դէմ միշտ արտունջներ յայտնել, բայց այդ անգամ, պէտք է ասած, որ ընդհանրապէս բոլորս էլ զոհ սրտով և սիրով էինք հնազանդւում ընդհանուր կանոններին:

Հասպով թէյ խմելուց և նախաճաշից յետոյ, մօտաւորապէս ժամի 6 էր, երբ պատրաստ, զինուորական կարգով կանգնած էինք՝ երեսներս դարձրած դէպի մեր դաստիարակը, որ մի քանի խօսքով թուեց մեզ այն գլխաւոր վայրերը, որ պէտք է այցելէինք, խրախուսեց մեզ կարգապահ լինել և ոգևորեց՝ մեր նախնեաց անցեալ փառքի վեհութիւնը յիշեցնելով:

Յետոյ մեր դաստիարակի խնդրանքով՝ դերասանուհի Վարդան ծերունազարդ արքեպիսկոպոսը և Մանասին ծխատէր քահանայ Տէր-Յովհաննէսը օրհնեցին մեր ճանապարհը «պահպանիչ»-ով և «Տէր ուղղեալ զգնացս մեր» մաղթանքով:

Անկարելի է նկարագրել թէ ինչ էր զգում մեզնից իւրաքանչիւրն այդ միջոցին, թէ ինչպիսի մտքեր էին խռնուում մեր պատանեկան ուղեղներում: Անկարող եմ բացատրել այն զգացմունքը, ինչ որ զգում էի այդ բոլորէին. երբէք ես այնպիսի ջերմեռանդութեամբ և զգացմունքով չէի հետեւել որ և է աղօթքի, ինչպէս այդ առաւօտ. Երեւակայութիւնս թոյլէքներ էր անում և անցեալի յիշողութիւնները ներկայի ու ապագայի հետ շողկապում... մինչ ես այսպէս մտքերիս մէջ խորառուզուած արձանացել կանգնել էի, յանկարծ լսեցի «յառաջ» խօսքը և քայլերգի ներդաշնակ հնչիւնները. առաջ էինք գնում զինուորական կարգով և համաչափ քայլուածքով: Մեր ճանապարհորդական հագուստը միատեսակ էր. հագած ունէինք սպիտակ կոորից (պարուսին) վերնաշապիկ և անդրավարտիք, մոխրագոյն գլխարկ՝ արեակալ վզնոցով. ձեռքերնիս բռնած ունէինք սրածայր փայտեք, իսկ մէջքերնիս՝ ծալած ձմեռուայ վերարկուն և ճանապարհորդական պարկը, որի մէջ գտնուում էր մի ձեռք փոխնորդ, մի ձեռք ձմեռուայ զգեստ, գուլպայ, թաշկինակ և մի օրուայ պաշար՝ հաց ու պանիր:

Մեր ճանապարհորդական հագուստի նկարագիրն ամբողջացնելու համար պէտք է աւելացնել, որ հագած ունէինք լաւ տրեխներ՝ երկար գուլպաների վրայ. գուլպաների մէջ էին ամբողջրած անդրավարտիքի ծայրերը: Մհա այս զգեստների մէջ դարմանալի չէ, որ շատ տեղերում մեզ նորակոչ զինուորների տեղ էին ընդունում՝ նամանաւանդ որ թմրեհախար և փողհար էլ ունէինք:

Մեր քայլերգն ու երաժշտական դործիքների հնչիւնները մի բոլոր հնուացնում էր գիւղացիների ուշադրութիւնն իրենց

դարձելուց. նրանք մտնում էին ճանապարհին՝ սիրով ողջունում և հետաքրքրութեամբ դիտում էին մեզ: Այս կարգով հասանք մինչև ձորի գլուխը և այդտեղ կանոնաւոր քայլուածքը ընդհատելով՝ առաջ շարժուեցանք մէկ-մէկ կամ աղատտեղ կաղմուած փոքրիկ խմբերով: Մի բոլորէ կանգ առնելով ձորի գլխին՝ զմայլում ենք գեղեցիկ տեսարանով. անդհալսար ձորի մի կողմից բարձրանում են ուղղահայեաց ահարկու ժայռերը, իսկ միւս կողմից կանաչադաղ այգիները. հեռուից երևում է Լաւուար սարը, իսկ ձորի մէջ վազում է կատաղի շորապետը կամ Դերէտը՝ լայնարեւրան ալիքները դարկելով անդգայ ժայռերի կրծքին: Ձորի արեւելեան կողմից երևում է անդ քարաժայռի վրայ ցրցուած Կայեան պատմական բերքը: Արևն էլ արդէն իր ոսկեգոյն ճառագայթները սփռել էր լեռանց կատարների վրայ և հրաշալի գոյն էր տալիս սար ու ձորերին: Անսովոր ճանապարհորդը կը դարհուրէ՝ տեսնելով այն սարսափելի ժայռերը, որոնց միջով մինեղ օձապտոյտ շաւիղ իջնում է դէպի անդունդը. ահա այդ ծուռ ու մուռ և «մուտք» կոչուած ուղիով ցած ենք իջնում և մտածում, որ եթէ Աստուած մի արասցէ, ոտքդ մի փոքր սայթաքի՝ առանց այլայլութեան՝ ահագին ժայռերին ջախջախուելով անդունդը պիտի գլորուես և շորապետի փրփրադէզ ալիքներին զոհ դնաս:

Անվտանգ անցնելով քարածերակներից՝ հասանք ձորի այն տեղը, ուր սրբնթաց Դերէտի վրայ ձգուած է հոյակապ քարաշէն կամուրջը և դաստիարակի ցուցումներով սկսեցինք կամուրջի դիտողութիւնը: Սկորդեաց ձորի այս պատմական կամուրջը շինել է տուել Նանա այրի թագուհին՝ ի յիշատակ իր վաղաթառամ ամուսնու, Լօռու Արաս թագաւորի և Զաքարէ ու Իւանէ սպասաւար եղբայրների: Կամուրջի երկարութիւնն է 28 սաժէն, լայնութիւնը՝ 5 արշին, կամարի բարձրութիւնը 19 արշին. շինուած է կամարների վրայ սրբատաշ քարերից: Կամուրջի մի ծայրը հաստատուած է ժայռի վրայ, իսկ միւս ծայրն ամուր որմի վրայ և դէպի հարաւ իջնում է աստիճաններով: Կամուրջի երկու կողմը գտնուում են շորս կոփածոյ քարից քանդակուած աւուծներ, որոնք ժամանակի ընթացքում բաւականին մաշուել են: Կամուրջի ներքին ծայրում գտնուում է մի խաչքար՝ կամուրջ շինողի, Նանա բարեպաշտ թագուհու հրամանով կանգնեցրած. խաչքարի վրայ արձանագրուած է հետեւեալը.

«Կամու՛ն Աստուծոյ ես նանա յազգէ Բագրատունեաց դուստրը Մեծին Սարգսի քոյր Զաքարէի և Իւանէի կին Արատայ թագաւորին որ վախճանեցաւ Կեսարեայ խաւարեցոյց զմեզ. կանգնեցի զխաշո, շինեցի զկամուրջս յիշատակ նմա և ի մխիթարութիւն ինձ և ի կեանս ծնողաց և եղբարց մերոց. յիշեցէք ի Քո. Յո. *):»

Խաչի ճակատը, որ այժմ կոտորուած և վայր է ընկած, կըրում է հետեւեալ արձանագրութիւնը.

«Նշանդ Աստուծոյ լեր բարեխօս իշխանայ յազգէն Բագրատունեաց»:

Եօթը հարկւր տարուայ այս հրաշակերտ կամուրջը ապացոյց է մեր նախնեաց հմուտ ճարտարագետութեան. սա միակը չէ, մեր ճանապարհորդութեան միջոցին պատահել ենք նոյնաման քարակերտ կամուրջների, որոնք մօտ տասնեակ դարեր անցնելուց յետոյ էլ նայողին զարմացնում են իրենց ամրութեամբ և դիմացկունութեամբ՝ թէև շինուած են Զօրագետի նման կատաղի հոսանք ունեցող գետերի վրայ:

Կամուրջի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ՝ շարունակեցինք ճանապարհներս գետի ընթացքի հակառակ ուղղութեամբ, այգիների և ագարակների միջով: Բեռնակիր անասունների յետեից գնացող գիւղացիներից շարունակ լսում ենք. «ադա՛ն, էտ ո՛ւր էք գընում, սալգաթնի է՞ք». «Ո՛չ, աշակերտներ ենք, գնում ենք Վարդաբլուր ուխտի», պատասխանում ենք մենք և երկու կողմից էլ շարունակում ճանապարհը: Սևորդեաց ձորը տեղ տեղ նեղանում և լայնանում է. անցնում ենք մի կամարակապ կամուրջի վրայից և հետզհետէ բարձրանում ծուռ ու մուռ ճանապարհով. ձորի երկարութեամբ արհեստական պարսպի նման կանգնած են բարձրաբերձ և ուղղահայեաց ապառաժները. արեն էլ բաւականին բարձրացել է և այդ ժայռերը տաքացնելով՝ օդը ջերմացրել: Թէև բաւականին դժուար էր այդ քարկապնեւորով բարձրանալը, բայց բնութիւնն այնքան գրաւիչ էր, որ իր հրապոյրներով կաշկանդելով մեր սիրտն և ուշադրութիւնը՝ աննկատելի էր դարձնում ճանապարհի անտանելիութիւնը: Ուրիշ

*) Հայաստանի հիւսիս-արեւելեան գաւառում իշխող Արաս թագաւորը մեռաւ 19 տարեկան հասակում՝ թողնելով նանայից մի որդի՝ Աղսարթան անունով, որ և յետոյ յաջորդեց նրան:

պայմաններին մէջ գուցէ մենք դժուարանայինք բարձրանալ այդ օձապառոյտ լեռնային շաւիղներով, բայց մի այսպիսի գեղեցիկ և բանաստեղծական վայրում համարենք թէ անզգալի կերպով հասանք ձորի գլուխը: Այստեղից հորիզոնն աւելի ընդարձակուելով՝ տեսարանն էլ առաւել գեղանկար էր. մի կողմից խորն անդունդի մէջ Ձորագետն արծաթեայ գօտու նման շրջապատում է անտառներն ու այգիները, միւս կողմից տարածւում է ընդարձակ դաշարը. դաշտի սահմանում երևում են բլրաշարքեր և ապա Լալուար լեռան դագաթը. երևում են նոյնպէս Ամոճ և Օձուն գլուղերը:

Ձորի գլխին, ուր մենք մի փոքր հանգիստ առանք և որը ծովի մակերեւոյթից 1000 մետր բարձրութեան վրայ է դասուում, գտնուում է գեղեցիկ քանդակագործութեամբ մի խաչքար, որի պատուանդանի վրայ երևում են եղծուած արձանագրութեան հետքեր: Խաչքարն ինչպէս երևում է բաւականին հին պէտք է լինի և կարելի է ենթադրել, որ շինուած լինի այդ սեպագած քարաժայռերի միջով ճանապարհ հարթողի ձեռքով:

Մի փոքր ժամանակ հանգստանալուց յետոյ՝ ժամի ութին ճանապարհ ընկանք դէպի Օձուն կամ Ուզունլար կոչուած գիւղը՝ Յովհաննէս Իմաստասէր կաթողիկոսի հայրենիքը. անցնում ենք ընդարձակ դաշտի միջով, որի մի մասը դեռ ծածկուած է ցորենի ոսկեգոյն արտերով: Այստեղից գիւղացին մի կողմից՝ մանդաղը փայլեցնելով հնձում է արտը, իսկ միւս կողմից՝ արդէն հնձած արտերը վարում գութանով: Քանի առաջ ենք գնում, գիւղն աւելի որոշ է երևում. գիւղն ամբողջապէս շրջապատուած է ծառազարդ այգիներով: Իսկ այգիների միջից երեւցող դէզերը մի առանձին գեղեցկութիւն են տալիս գիւղի տեսքին. ծառերի կատարների վրայից փայլում է եկեղեցու կաթողիկէի խաչը:

Երբ մօտեցանք գիւղին, կարգի ընկանք և ղինուորական քայլով ու երաժշտութեամբ դիմեցինք դէպի նորընծայ Տէր-Բաղդասար քահանայի տունը. մեր երաժշտական փոքրիկ խմբին ձայնակցում էր գիւղի ահագին գամփռների խմբական հաջորդ Գիւղում կենդանութիւն էր տիրում, որովհետեւ կալի ժամանակն էր և ամեն կողմից «կալ արա, դարման արա, եղբ ջան...» էր լսուում: Մեզ դիմաւորեց նորընծան և երեւի գործի տաք ժամանակը լինելով՝ շուտ հեռացաւ և այնուհետեւ չերեաց. մենք

ներս մտանք ոհնեալը հանդստանալու, որպէս զի նորից կարողանանք շարունակել մեր ճանապարհը. երկար մնալ չէինք կարող, որովհետեւ այդ երեկոյ անպատճառ պէտք է Վարդարուր լինէինք, որպէս զի միւս առաւօտը հանդիսատես լինէինք սուրբ Սարգսի ուխտագնացութեանը:

Երկու ժամ հանդստանալուց և ճաշելուց (հաց, ձու, պանիր) յետոյ շնորհակալութիւն յայտնեցինք հիւրասէր քահանայի երիտառարդ եղբօրը և ժամի 11-ին գիւղից դուրս եկանք նոյն կարգով՝ ինչպէս որ ներս էինք մտել: Ախօրուայ շողն սկսուի էլ, երկինքը պարզ և անամպ. արտերի միջով դնում ենք գէպի հարաւ-արեւմուտք. տեղաբանն էլ միշտ միևնոյնը—անընդատ դաշտեր՝ լեռներով սահմանափակուած: Առաւօտեան մեր ուրախ տրամադրութիւնը մի փոքր պաղել է. չոգը դօր է անում, ջուր էլ չկայ. բայց երբ մեր շուրջը նայելով՝ տեսնում ենք արիւնքիւրէնք մտած գիւղացուն արտը հնձելիս և երգելիս, քաջալերւում ենք և զրուցատրեկով առաջ քայլում: Տեղ տեղ մեր խումբն երեւալուն պէս՝ հնձուորները մի խուրձ ցորեն խտած վազում էին մեր դաստիարակի առաջը կտրում. «Աղան, Ասծու ողորմութիւնը քեզ փէշքէշ» ասում և դրամ ստանալով օրհնելով հեռանում:

Վերջապէս երեաց իգահատ կամ Այգահատ գիւղը, մօտեցանք, աղբիւրից ջուր խմեցինք և կրկին շարունակեցինք մեր ճանապարհը: Գիղի մօտ ճանապարհը երկուսի էր բաժանուում և չգիտէինք թէ ո՞րն ընտրենք. դաստիարակը ձայն տուեց հնձուորներից մէկին, որ հարցնէ թէ՛ ո՞րն է Վարդարուր տանող ճանապարհը: Փոխանակ պատասխանի, մէկ էլ տեսնես հնձուորներից մէկը մի խուրձը շալակած վազում է գէպի մեզ. երբ հասաւ, խուրձը դրեց մեր առաջը և ասաց. «ձեզ փէշքէշ ա, աղա»:

—«Դեռ իմ հարցին պատասխան տուր, ո՞րն է Վարդարուր ճանապարհը»:

—«Ձէ, հլա մի սրան ջուղար տու, եղին»:

—«Ի՞նչ ջուղար, տամ»:

—«Դէ մի էրկու շահի բախշեցէք, հէնց գիտենանք թէ ուխտատեղումը տանձի էք տուել—կերեր»:

—«Էդ լաւ փեշակ չի, ինչ որ դուք բանեցնում էք»:

—«Դէ ի՞նչ անենք, աղա, սովորութիւն ա, ոնց որ տեսել ենք, էնպէս էլ անում ենք...»:

Գիւղացիին հեռացաւ, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Հասանք մի ձոր, որի միւս ափին երևում էին Ծաթեր և Զորագեղ հայ գիւղերը և հեռուից տեսանք Ղաչաղան կոչուած գիւղը, որ երեւի «ղաչաղ» թուրքերէն բառից կազմուած լինելով՝ նշանակում է զաչաղների կամ աւազակների բուն. զաչաղանցիները ժողովրդի բերանում կոչուում են «ազուա թուցնող», թէ ինչո՞ւ, չկարողացանք իմանալ: Երբ իմացանք, որ աղբիւրը գտնուում է ձորի մէջ և թէ կէս ժամ էլ պէտք է գնանք, որպէս զի սառը ջրի համ տեսներն՝ մեր դէմքերը կարծես թէ դժգոհ արտայայտութիւն ստացան. ճանապարհորդութեան առաջին օրը լինելով և քիչ էլ փափուկ ասլերուն սովոր լինելով՝ անսովոր էինք համբերութեան այսպիսի դասերին, բայց հետզհետէ այդ էլ սովորութիւն դարձաւ մեզ համար: Երբ հասանք աղբիւրին՝ սիրտներս ուրախացաւ. աղբիւրի սառնորակ, բայց չափազանց բարակ ծորող ջուրը փայտեայ կիսախողովակի միջով թափուում էր նոյնպէս փայտեայ երկարաձև աւաղանի մէջ, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Ծառի մի ահագին բուն, մէջը փորած. դրան գիւղացիները կոչում են «նաւ» կամ «նով» և դրա միջից են առնուողները ջուր խմում: Աւաղանի մէջ շարուած էին մի շարք մեծ ու փոքր փայտեայ ջրամաններ ու կժեր, իսկ դրանց մօտ կանգնած կամ նստած էին մի խումբ երիտաններ, որոնք հերթի էին սպասում: Զուր չեն ասում ուրեմն «ջրջոր եղած զաչաղանցիք»:

Մենք մեր ճանապարհորդական թիֆեղեայ բաժակներով խմելով ջուրը, ահամայ ուշադրութիւններս դարձրինք այն փայտեայ փոքր ջրամանների վրայ, որոնք իրենց ձևով արդէն ցոյց էին տալիս, որ գիւղացու սեպհական անարուեստ ձեռքի արդիւնք են:—Հայ գիւղացին ամբողջ ամառը դաշտային պարապմունքով զբաղուած լինելով՝ ձմեռն էլ պարապ չէ նստում տանը և իր ձեռքով է պատրաստում տանու իրերը. տաշտ, ջրաման, կոթ, գգալ, աման, թի, յորսլի, եղան, սայլ, լուծ և այլն, որոնք հարկաւ մեծ մասամբ կոպիտ տաշուածքներ են լինում, թէև պատահում են նաև ճարտար արուեստագէտներ, որոնք հասարակ և նահապետական գործիքներով՝ նուրբ քանդակուած իրեր են պատրաստում:

Սառնորակ ջրով մի փոքր կազդուրուելով՝ իջնում ենք դէպի ձորը, որ կոչուում է «հնէվանայ ձոր». ժայռի գլխին կա-

ուղեցուած է «Հնէվանք»-ի անունով բերդը, որի աւերակներն են մնացել այժմ. ճանապարհը քարքարոտ է, մեր ընկերներից մի քանիսի ոտքերը «հրաժարիմք» են կարգում, սոկայն «անճարը կերել է բանջարը», միւսներից խրախուսուելով կամայ ակամայ առաջ են շարժոււմ. ամինից առաւել երկար մահապալու անսովոր են հանդիսանում մեր Թիֆլիզցի ընկերները... Անցնում ենք մի փայտեայ կամուրջի վրայից. ապառաժների ստուերում հանգստանում է ոչխարի հօտը. այգտեղից էլ սկսւում է մի դառիվեր և օձապտոյտ ճանապարհ և ապա իջնում կրկին ծխախոտի ընդարձակ ցանքսերով ծածկուած ձորը:—Ծխախոտի մըշակութիւնը այստեղ բաւականին տարածուած է. քիչ է արտահանւում, մեծ մասամբ իրենց գործածելու համար են մշակում. ծխախոտը միջակ և ստորին տեսակիցն է, ծախում են ֆունար 20 կոպէկով:

Մինչ մենք գանգատուում էինք՝ Թէ Աղէլխանեանի գործարանում պատրաստուած և մասամբ հւրոպական շնորհք տուած արեխները լաւ չեն պաշտպանում մեր ոտքերը քարերից, դաստիարակը մեր ուշադրութիւնը դարձրեց շուտ շուտ պատահող ուխտաւորների խմբերի վրայ, որոնք գնում էին «ոտարօքիկ», հայ ուխտաւորները ըստ նախնի սովորական ջերմեւանդութեան և հաւատի ոտարօքիկ են ուխտ գնում—երբեմն մի քանի օրուայ ճանապարհ:

Ահա մօտենում են մեզ մի խումբ ուխտաւորներ, մեծ մասամբ կանայք.

—«Նանի, բարի օր ձեզ, ո՛ր էք գնում»:

—«Վարդաբլուր ուխտի, որդիք, որդիանց էք գալի»:

—«Սանահնից. հեռու է Վարդաբլուրը»:

—«Ձէ, մօտ է, շատ հեռու չէ, իրիկնադէմին կհասնէք», պատասխանեցին նրանք և առաջ անցան:

Մենք էլ մօտ ժամի 3-ին հասանք ձորի մի աղբրի մօտ և դաստիարակի պատուէրով հանգստացանք այդտեղ, ծառերի հովանեաց տակ, Չորագետի աջ ափին. հետաքրքրական էր տեսնել՝ Թէ ինչպէս մեզնից իւրաքանչիւրը մի տեղ նստած կամ կիսապառկած գրութեամբ մեծ ախորժակով մի կտոր հաց ու պանիր էր ուտում և սառն աղբրի ջրից խմում: Այդ միջոցին մեր մօտով անցնում էին երկու գիւղացի բռնաւորուած ձիերով.

—«Բիձա, սրտեղացի ես»:

—«Նաղպատեցի»:

—«Յ՛, փիշխու պուտոյ Նաղպատեցի» ես հա՛, ո՛ւր ես գընում, ի՛նչ ունիս բարձած ձիւս վրայ»:

—«Գնում եմ Վարդաբլուր, տանձ եմ տանում որ ծախեմ»:

—«Ո՛նց ես ծախում»:

—«Տասը գրուանքան մի արամի»:

Մենք ուղեցինք տասը ֆունտ գնել. գիւղացին Լօռեցուն յատուկ ծանր ու բարակ և դանդաղ շարժողութեամբ հանեց կշեռքը, որի թաթերը մի մի հին, ծակուած մազեր էին. մի գրուանքանոցից մեծ չափ չունէր, ի՛նչպէս չափէր տասը ֆունտը. մի քանի բոպէ տատանուեց՝ արդեօք տասն անգամ կշռէ, թէ ուրիշ կերպ. վերջը վճռեց մի քանի քարեր հաւաքել և կըշռել. հէնց որ քարերն ածում էր, թաթի մէջ և կշիռը բարձրանում՝ թաթը ծռւում էր և քարերը գետին էին թափւում. տեսնելով որ այդպէս չի յաջողւում՝ գիւղացին մի թաշկինակ խընդրեց մեզինց և քարերը մէջը կապելով՝ հազիւ կարողացաւ տասը գրուանքանոց ծանրութիւն կազմել և ապա թէ տանձը կշռել: Այդ գործողութեան միջոցին մենք դիտում էինք և երբեմն էլ չկարողանալով ծիծաղներս պահել՝ զուարճանում էինք. գիւղացին նկատելով այդ՝ սկսեց կշեռքի տիրոջն անիծել:

—«Ո՛վ գիտէ քրէհով ես վերցրել կշեռքը»:

—«Բա քրէհով չի ինչ ա», պատասխանեց գիւղացին և քրէնց իր ձին:

Մենք էլ մօտ երկու ժամ հանգստանալուց յետոյ՝ ժամի 4-ին ճանապարհ ընկանք և կէս ժամ գնալուց յետոյ բարձրացանք այն փոքրիկ բլուրը, որի վրայ շինուած է Ձնէվանք կոչուած աւերակ եկեղեցին: Ձտապով սկսեցինք մեր դիտողութիւններն անել և դաստիարակի ցուցումները գրի անցնել: Սրբաւատաշ քարից շինուած եկեղեցու արտաքին ձևը չէ զանազանւում հայոց եկեղեցիների ձևից, բացի գմբէթից, որ տարբեր է: Եկեղեցու շէնքն անսիւն է և կաթողիկէն կոնգրեմէն է չորս խաչաձև կտրող կամարներով վրայ. նման է Սանահնու սր. Գրիգոր եկեղեցուն: Արեւելքից և հարաւից ունի երկխորան գաւթներ՝ սրբաւատաշ սև քարից շինուած. հարաւային գաւթում կայ նաև պատարագամատոյց սեղան: Խորաններն առանց դռների են և բացւում են եկեղեցու մէջ երկու սիւնազարդ կամարներով: Եկեղեցու կաթողիկէի և հարաւային խորանի ճակատին կան յունարէն և հին վը-

բացերէն (խուցուրի) տառերով արձանագրութիւններ, այդ վերջին արձանագրութեան ճակատին քանդակուած է յունական խաչ, ճկեղեցու ձևից և արձանագրութիւններէց կարելի է հնթադրել, որ վանքը նախ յունական է եղել, իսկ յետոյ վրաց տիրապետութեան ժամանակ ընկել է վրաց ձեռքը: Վանքի արևելեան կողմը գտնուում է մի քառանկիւնի միծ շինութիւն, որի տանիքն ամբողջութեամբ է, իսկ սրմէրը շինուած են ոչ սրբատաշ քարից: Ի նկատի ունենալով շէնքի անկանոն լուսամուտները և ոչ սրբատաշ քարից շինուած լինիլը՝ կարելի է հնթադրել, որ եկեղեցի չէ եղել, այլ հիւրատուն կամ սոփորական բրնակարան: Վանքի շրջակայքում երևում են ընդարձակ քարակոյտեր, որոնք շինութեանց հետքեր են և ապացոյց են, որ այդտեղ երբեմն բազմամարդ բնակութեան վայր է եղել:

Վանքի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ ճանապարհներու ուղղեցիք դէպի աջ կողմը դանուղ անտառը. անտառը խիտ է և շարունակ բարձրանում ենք. ձորի միւս ափին երևում է Կուրդաւն գիւղը: Գեղից ոչ հեռու կուրդանցիք վար էին անում. 10—12 լուծ եղն ու գոմէշը քաշում էին գութանը. բաւականին հեռուից լսում էք վար անողների հոռովէքը. բարեպաշտ գիւղացին ոչինչ գործ չէ սկսում առանց Աստուծոյ անունը տալու, որպէս զի Աստուած քաղցր աչք ունենայ իր վրայ: Գութանի երգն էլ նա սկսում էր. «Օ՛րհնեալ է Աստուած, հոռովէլ, հոռովէլ»:

Արևը բաւականին թերուել էր դէպի իր մուարը, երբ դուրս եկանք անտառից և մտանք դաշտը. բնութիւնը գեղեցիկ տեսարան էր ներկայացնում. անտառապատ լեռներ, գեղեցկանիստ բլուրներ, լայնարձակ դաշտեր, որոնք արևի վերջին ճառագայթների տակ աւելի գեղանկար էին: Ջելիլուռն ալիքաման տատանում էր դաշտի կանաչ խոտերն ու դեռ չհնձուած արտերը. մեր առաջը հոսում է մի առուակ, որի մօտ մի փոքր հանգստանալուց յետոյ՝ շարունակում ենք մեր ճանապարհը:

Ուխտաւորները գնում էին ձիով, էշով, ոտքով. ոմանք էլ մի քանի ոչխար կամ գառն առաջն արած տանում էին ծախելու կամ մատաղ անելու: Կանայք իրենց զաւակներին գիրկն առած, տղամարդիկը յետենքն ընկած, քրտինքն երեսներին, կարմրած, շտապով գնում էին հասնելու այդ սրբավայրը՝ մութն ընկնելուց առաջ. կանանցից ոմանք իրենց փոքրիկ մանուկներին

նստեցրել կամ կապել էին իշի վրայ կամ ձգել խուրջինի մի կողմը և իրենք էլ «ճիպոտը» ձեռն առած՝ բզում էին խեղճ անասունին, որ շուտ գնայ. բայց որ սպանես էլ, էշը իր «եւրիշը» կը փոխի: Անցանք Կոնստանդնուպոլիսի մօտից, որ ունի 15 տուն բնակիչ և պատկանում է կալուածատէր Թումանեաններին, որոնք սկզբումը մի փոքր տարածութիւն հող գնելով՝ հետզհետէ իրենց ձեռքն են ձգել ընդարձակ վարելահողեր և այժմ վարձով մշակութեան են տալիս գիւղացիներին:

Արևը վաղուց ծածկուել է լեռան յետեր, սկսում է արդէն մթնել, բայց դեռ Վարդարուրը չէ երևում. մի փոքր յառաջ, մի քանի քայլ էլ և սհա երեսց Վարդարուրը, առանձին, իբրեւ «վարդ» բուսած դաշտի մէջ: Կենդանութիւն է տիրում անասնոց, տարբեր թռչունների և հաւաքած բլբլի գագաթին և «դառուլ-դուռնայ» ձայնը պարզ հնչում է մեր ականջին: Բլբլից ոչ հեռու է դանում գիւղը. մօտեցանք և սպասում ենք դատարարական—նա տմնից վերջն է դալիս, որպէս զի յետ մնացող շինի—եւր նա էլ յետամնացներին առաջն արած հառու մեղ՝ կարգի բնկանք և սովորական քայլով ու երգով մասնք գիւղը: Գիւղի քահանան իր որդու հետ, քեօխան և մի քանի գիւղացիներ գիւղատրեղով մեղ՝ առաջնորդեցին նախապէս մեզ համար պատրաստուած բնակարանը—Վարպետ Ղազար Սայինեանցի տունը:

Վերաբերուներս ու սրբերս վերցնելով՝ կարգով դարսեցինք մի անկիւնում և տեղաւորուեցանք թախտի վրայ. սենեակը մաքուր, ընդարձակ և կանոնաւոր շինութիւն էր. արեւմտեան պատի առաջն ամբողջապէս բռնում էր լայն թախտը. թախտի մօտ միմեանց վրայ դարսուած են անկողիններ, իսկ հարաւային պատի մէջ գտնուում է մեծ վառարանը—«պատի փէշը»: Սեղանը ծածկուած է սպիտակ սփռոցով և միայն մի աթոռ կայ: Երկու մեծ և ապակեայ լուսամուտները բացուած են արեւիկեան որմի մէջ, որտեղ է և դուռը. դրան մօտի պատի մէջ եղած միւս դուռը բացում է դէպի հարեան սենեակը: Պատի վրայ կախուած են չորեղէններ. սենեակում կան նաեւ հիւսնի գործիքներ:

Արդէն պատրաստի թէյն վայելելուց յետոյ՝ տանուէրն սկսեց ընթերթի կամ մեր «ճաշի» պատրաստութիւնը տեսնել, իսկ մենք զբաղուած էինք զրուցատրութեամբ և կատակներով: Գիւղացիները զարմանք էին յայտնում, որ մէկ օրում այնքան երկար ճանապարհ ենք եկել ոտքով. ոմանք մեր անցած ճանապարհը համարում էին

60 վերստ, ոմանք յիսուն և ոմանք էլ 40 վերստ. մեր ենթադրույթեամբ էլ վերջին թիւն աւելի մօտ պէտք է լինէր ճշմարտութեան: Երեկոն անցաւ բաւական ուրախ, թէ և մեր ոտքերի «հայր հաշէր» և մեր խոնջացած անդամները հանգստութիւն էին պահունջում: Վերջապէս ակտրժակով վայելիցինք տանախրոջ պատրաստած «քաշովին» ակտեցինք քնելու պատրաստութիւն տեսնել: Տանախիկներ յատակի վրայ փուկ կապերաներ, տուեց դօշակ, բայց մեր խմբի մի մասը տեղաւորուեց թախտի, միւս մասն էլ յատակի վրայ: Մեր վերաբերւոյնքն էլ ծառայում էին վերմակի տեղ:

Վարդարուր, 28 յուլիսի, կերակի:

Պայծառ արեւը բաւականին բարձրացել է հորիզոնի վրայ. նրա կենսատու ճառագայթները ներս թափանցելով մեր սենեակը՝ արդէն լուսաւորում են մեր դէմքերը, բայց մենք բոլորս հանգիստ պառկած ենք դեռ:

— «Տղե՛րք, վեր կացէ՛ք, թէ չէ շուտով ուխտաւորները յետ կղանան Մուրը Սարգսից», լսեցինք յանկարծ դատախարակի ձայնը և ոմանքս վեր թռանք. մի քանի բոպէից յետոյ մեզ կարելի էր տեսնել գլուխ աղբրի մօտ լուսցուելիս: Եկանք տուն, արդէն պատրաստի թէյն և հաց ու պանիրը վայելիցինք և ճանապարհ ընկանք դէպի բլուրը, որ գտնւում է գլուխ արեւելեան կողմը: Վերաբերւոյնքը մէջքերնիս թէք կերպով կապած և փայտերը ձեռքերնիս բարձրանում ենք բլուրը՝ հիւսիս-արեւելեան կողմից:

Վարդաբլուր*), ի՛նչ բանաստեղծական անուն. գաղափարի ի՛նչ ճշտագոյն արտայայտութիւն, այո՛, զուր չէ մեր արեգարդ «Նահապետ» բանաստեղծը, հայր Ալիշանը, գրիչ շարժել՝ գովաբանելու պիտի բլուրը՝ թէ և ինքը չէ՛ տեսել: Այսօր աւելի ևս գեղեցիկ է այդ կանաչադարձ բլրակը. նեղ շաւիղը տանում է դէպի վերև. գոյնզգոյն ծաղիկներ են սփռուած բլրի շորս կողմը. առաւօտեան զով քամին փչելով՝ բերում է դէպի մեզ այդ բլրաւոր անուշ ծաղկանց բուրմունքը: Բլրի գագաթին, ծառերի միջից երևում է սբ. Սարգիս ուխտատեղին պարսպով պատած: Ահա՛ այդ տեղ են ուխտի գալիս այսօր ամբողջ Լօռուայ գաւառից. քաղաքի նման երկար շարքերով բարձրանում են հարկւրաւոր կանայք

*) Ոմանք «Վարդարուր»ը կրճատում են համարում «Վարդանայ բլուր» բառերից:

աղջիկներ, երիտասարդներ, պատանիներ և երեխաներ. դրանց խոստարդէա զգեստների գոյները կարծես թէ մրցում է դաշտային ծաղիկների գոյների հետ. անառու ստորոտում «քէֆ» են անում արզէն երեկուայ եկածները: Որքան բարձրանում ենք, այնքան ընդարձակում է հորիզոնը և երևում ուխտաւորների անելի ստուար խմբեր. ճանապարհին մի փոքր հանգստանալուց յետոյ՝ նորից շարունակում ենք բարձրանալ և վերջապէս հասնում ենք բլրի գագաթը, որ վերջանում է երկու առանձին բարձրացած ահագին ժայռերով: Ինչպէս որ տեղացիք պատմում էին, բլրի գագաթին ժամանակով խիտ անտառ է եղել, որից այժմ միայն մի քանի ծառեր են մնացել: Բլրի գագաթին երկու ժայռերի մէջ գտնւում է մի տափարակ տեղ. ահա այդտեղ է հաւաքւում ուխտաւորների բաղմուժիւնը:

Մտրդու աշփերը շլանում են՝ մի քանի լոպէ նայելով այդ բաղմագոյն ամբողին. աղամարդ, կին, երեխայ, ձի, եղներ, սալ խառնուած իրար, կատարեալ բարիլոնեան խառնակութիւն են ներկայացնում. չեւ իմանում թէ ո՞ր կողմը նայես: Ահա մի տեղ քնթկալները ծնօտին կանայք նստած գետնին փռած վաղափ վրայ, միմեանց ափանջում են փսփսում. մի ուրիշ տեղ ահագին պղինձներով «մատաղ» են եփում. երբող տեղը «տաղանդալն» ու դուռնաշինները «քօքել» են իրենց սաղերն ու դուռնա դօրը. դրանց շուրջն են հաւաքուել պարողները: Մի այլ տեղ հաւաքուել են մրգալաճառի գլխին և նայում թէ ո՞վ ինչ է առնում. շատերն էլ պարապ կանգնած՝ իրենց շուրջն են նայում, իսկ մատուռի տուֆ, ուր առանց էն էլ տեղ չկայ, այնքան բաղմութիւն է հաւաքուել, որ անց կենալու տեղ չկայ: Հին ֆարաջան հաղին, խոնացած կամկաւկան մի փոքր ծուռը գլխին դրած, մազերը ճակատին փռւած և «քլտինքում կորած» Գեղամ հայր սուրբը հրամայում է, որ ամբողջ մեզ ճանապարհ տայ: Հայր սուրբի խօսքն իսկոյն իր աղդեցութիւնն ունեցաւ և ուխտաւորների միջով անցնելով հաղիւ կարողացանք խորանը մտնել:

— «էս սըլդաթնին ըստի խի են էկէ», «սըանց լագէրը որ տեղ է ա», «ախի էս սալդաթներն էլ են ուկ եկել», «վո՛յ, էսէնց պուճուր մնց են տարիլ սըանց սալդաթ». ահա այս բացագանչութիւններն էինք լսում ամեն կողմից. մեր խմբովին յայանուիրը զրաւցը բոլորի ուշադրութիւնը, բոլորն էլ հետաքրքրւում էին մեզնով և մեր հագուստից խաբուելով՝ դիմողներն էին կարծում մեզ:

Մատուռի արտաքին տեսքը շատ անշուք է և երկու մասից է բաղկացած. առաջին մասը փայտեայ սիւների վրայ հաստատուած մի սրահ է, որ վերջերս է շինուել. այդ սրահի միջից է գտնուում խորանի մուտքը: Սրահը լիքն էր ուխտաւոր կանանցով. դրանք մէկ մէկ մտնում էին խորանը, համբուրում, ծուռը դնում և դուրս գալի: Խորանն այնքան փոքր է, որ երկու մարդ միայն կտրող են աղաա ներս մտնել, համբուրել ու դուրս գալ. մատուռի ներսը լոյսը թափանցում էր նեղ լուսանցքով: Խորանն ունի մի պատարագամատոյց սեղան, առանց խաչկալի. սեղանի վրայ փրուռած էր մի «բաղդագի» և վրան բաղմեցըրած է թափանցիկ քողով ծածկուած սրբութիւնը: Խորանի մի անկիւնում կանգնած էր մի ծերունի քահանայ, ձեռքերը ցած թողած, մէջքը կորացրած, ալիսառն մօլուտով, բայց սև մազերով. սկզբումը կարծեցինք թէ պատժուած քահանայ է, բայց վերջն խմացանք, որ այսօրուայ պատարագիչն է և պատրաստուած է: Բեմի վրայ դրուած էր սուրբ Աւետարանը, սբ. Սարգսի մատուռքը և մի պղնձեայ ափսէ: Ջերմեռանդ ուխտաւորներն Աւետարանը համբուրելուց յետոյ իրենց լուման ձգում են այդ ափսէի մէջ:

Հայ գիւղացին դառն քրտինքով ձեռք բերած մի քանի սև կոպէկները չէ խնայում «խաչահամբոյր» կամ «աջահամբոյր» տալու. առհասարակ հայերն սուսատաձեռն են եղել դէպի իրենց վանքերն ու եկեղեցիները: Հայ ժողովրդի և իշխանների փողով են շինուել Հայաստանի բոլոր վանքերն ու ծաղկելով երկար դարերի ընթացքում պահպանուել: Վանքերին ընծայուած կալուածքները կազմում էին վանքի սեպականութիւնը. եկեղեցական կանոնների համաձայն՝ միաբանները մասը շունէին. նրանք կալուածքի արդիւնքը պէտք է գործ դնէին ժողովրդի օգտին՝ անկեղանոցներ, հիւանդանոցներ և հիւրատներ պահելով: Այժմ թէև վանքերը կորցրել են իրենց նախկին նշանակութիւնը, զրկուել կալուածքներից ու միաբանութիւնից, բայց նրանց նշանակութիւնը դեռ հայ ժողովրդի աչքում չէ ընկել և զրանցից շատերը, որ մի մի լուսատու ջահեր են եղել Հայաստանի համար և այժմ զրկուած իրենց լոյսից՝ հազիւ նշմարելի ծուխ արձակում, դարձեալ պահպանուած են ժողովրդի նուիրած կռպէկներով...:

Մատուռից դուրս գալով մօտեցանք այն քարակոյտին, ուր դիմում էր ուխտաւորների բազմութիւնը և դիտում ենք. կանայք խմբերով գալիս են, ջերմեռանդութեամբ համբուրում մերկ քարե-

րը, մօտ վառում, խոնկ ծխում, գոյնզգոյն թելեր վաթաթում և չորի կտորներ կպցնում, որպէս ղի իրենց ցան ու վիշան էլ մընայ այդ քարերի վրայ վաթաթուած և իրենք աղատուին: Եւ նրանք այդ անում են համոզմունքով, լի հաւատով և յուսով. և միթէ այդ հատատուն հաւատքի շնորհիւ չէ, որ շատ անգամ հիւանդներն ու անդամալուծները ուխտատեղիներէից վերադառնում են լոյսւրովին առողջացած. միթէ նոյն իսկ այժմեան իրական գիտութիւնները չեն ապացուցանում «հաւատք ք» կեցուցեն դեռդ» խօսքի մեծ ճշմարտութիւնը...:

Մատուռի մօտ գտնուում է մի ընդարձակ շինութիւն, առատապէս ամրոցւովին քանդուած. մնացել են միայն չորս որմերը: Այդ շէնքի ձևից երևում է, որ պէտք է հիւրատուն եղած լինի: Թէ սր. Սարգսի մատուռը և թէ հիւրատունը շինել է տուել Գիւրիկէ թագաւորը հայոց ՁԼ (530) թուին (Փրկչական 1081 թ.). մատուռի շէնքն աւարտուել է Աշոտ մարծպանի ձեռքով: 1828 թուին, երբ մատուռը վեոանդունդել են, գտնուել է սր. Սարգսի արծաթապատ մասունքը և կրկին թաղել են նոյն տեղը: Հիւրատան երկարութիւնը (արեւելքից—արեմուտք) 18 արշին է, լայնութիւնը 8 արշին 3 վերջով, բարձրութիւնը 6 արշին. հարաւային որմի վրայ գտնուում է հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի ՁԼ թուականութեան հայոց ես Գիւրիկէ շինեցի
(Ճշնջւած) վստն միղաց թողութեան և արեւշատութեան իմոյ ընդ ձեռամբ Աշոտայ մարծպանին արժանաւայել»: Պատերի վրայ երևում են հինգ հատ կամարների մնացորդներ. մուտքն արեւելեան կողմից է, կիսով չափ թաղուած հողի մէջ, այնպէս որ շափելու համար հաղիւ կարողացանք ներս մանել. յատակն այժմ ծածկուած է մարդաշափ եղինջով: Հիւրատունն ու մատուռը պատած են եղել ամուր, բրգաւոր պարիսպներով, որոնց հետքերը մինչև այժմ էլ մնացել են. տեղի դիրքն ենթադրել է տալիս, որ այս բլուրը կամ ամրոց է եղել կամ իշխանական ամարանոց:

Մատուռի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ բարձրացանք բլրի ամենաբարձր գագաթը, որ մի ահագին կարմրագոյն ժայռ է: Օգուտ քաղելով մեր չորս կողմը տարածուած ընդարձակ հորիզոնից և պարզ եղանակից՝ դատարարակը պատուիրեց մեզ հանել մեր յիշատակարանները և հետեւալ դիտողութիւնները նշանակել.

Առաւօտեան ժամի 9 է. արեւի տակ ջերմաշափը ցոյց է տալիս 24° (Բէօմիւր). գտնուում ենք ծովի մակերեսայթից 1610 մետր

բարձրութեան վրայ. ուրեմն մեր մշտական կացարանից, Սոնտհ-նից, 610 մետր բարձր ենք կանգնած: Հիւսիս-արեւելեան կողմից հարիզմը սահմանագծում է Չաթին-դաղ լեռը. հիւսիսից՝ «Շէկ-աղբիւր» կամ «Տոսկաջուր» բլուրը. իսկ դրա հետեւ հեռւում երեւում է «Ալուարայ» գագաթը. գէպի տակի հիւսիս երեւում է «Գոլլարդ» լեռը: Տոսկայ ջրի և Գոլլարդի մէջը գտնուում է «Էծա-քար» կոչուած բլուրը. սրանք բոլորն էլ անտառադուրկ և մերկ տարեր են: Գոլլարդի շարունակութիւնը գէպի հիւսիս՝ կաղմում է «Ալարխաշ» լեռը: Արեւմտեան կողմից երեւում են. «Քողար» լեռ-նաշղթան և մեծ ու փոքր «Դուայ» լեռները, որ նշանաւոր քարա-հանքեր են—ամինալաւ: ջրադացքաբերն այստեղ են պարտասա-ւում: Բլուրը շրջապատուած է ընդարձակ դաշտավայրերով, որոնք Սետրդեաց ձորի շարունակութեամբ երկու մասի են բաժանուում. միջովն անցնում է Դէրէտը. մեր դիւրից երեւում են Ջալալօղլի գիւղաքաղաքն և տասնհինգ (15) հետեւեալ գիւղերը. արեւելեան կողմից՝ փոքրիկ ձորի գլխին՝ Կուրդան կամ Կորդան գիւղը. ձորի միւս կողմը՝ գէպի հիւսիս-արեւելք Ղաշաղան. նրանից տակի հե-ռու մեծ ձորի միւս ափին Դսեղ կամ Դրսեղ: Դսեղից բարձր գէ-պի հիւսիս, լեռան փեշերի վրայ է Քարինջ գիւղը: Հիւսիսային կող-մից երեւում է Կողէս յունարնակ գիւղը և Մղարթը. սրանից արե-ւմուտք Եղդան կամ Եղլտանք յունարնակ գիւղը—երեւմն հայաքնակ Եղլտակը: Հիւսիս արեւմտեան կողմից երեւում է Ագարակը, իսկ դրանից բարձր Լեշան գիւղը: Արեւմտեան կողմից երեւում է Ալէք-սանդըովկա գիւղն ու Ջալալօղլին: Արեւմտա-հարաւային կողմից, Վարդաբլուր գիւղի մօտ Հորարձի գիւղը. դրանից քիչ բարձր Գիւլ-ազարակը, Հայոց Գարգեառը իսկ տակի բարձր ուռտաց Գարգեառը: Արեւելքից-արեւմուտք ձգւում է Դէրէտայ ձորը, իսկ բլրի տա-կով անցնում է «Գարգեառայ ջուր» կոչուած գետակը:

Վերջացնելով Վարդաբլրի շրջակայքի դիտողութիւնը՝ իջանք ցած և մատուռի մօտ մի սառեւր տեղ ընտրելով՝ դիտում էինք մեր շուրս կողմն եղած բազմութիւնը. ա՛յնքան ժողովուրդ էր հա-ւաքուել այդ բոքրիկ բլրի վրայ, որ խկական մաքով կարելի էր ասել թէ՛ «ասեղ գցես գետին չի ընկնի»: Ոմանք նոր են բարձ-րանում բլուրը, միւսներն իջնում են դաշտը, ուր նոյնպէս մեծ կենդանութիւն է տիրում: Աղանդ կարելի էր տեսնել Լօուզ գա-նազան գիւղերից քնթկաններ երեսին՝ կարմիր, կանաչ և այդպի-սի պայծառ գոյնի զգեստներ հագած հարսներ ու պառաններ.

Ջուլաւրեցի և Զաւայօղլեցի պճնադարդ դերիւններ հագած և գլուխ կապած «սապնասիւսն» կանանց: Գիւղացի կանանց հագուստը բաղկացած էր հետեւեալ մասերից. երկար «լէհին» (գերիայ) մէկ ամբողջ կամ երկու կտորից՝ մէջքը սեղմուած արծաթեայ կամ բնահեղեայ գօտիով, որի ծայրերը կապուած են «թոխիւ յով». գլիններին դնում են «չիխտի-կոպի», վրայից ծածկելով գոշիզգոշ «լէ-չաղներ». բերանները կապում են սպիտակ յնթկալով. ումանք ճակատին կապում են ոսկիների շարք, վզներիցը կախում են արծաթեայ վղնոցներ, մանեակներ, յուլունքներից ու փայլուն իրերից կազմուած շարաններ: Դաստակի վրայ անց են կացնում «բլազուկ» ներ՝ արծաթից կամ յուլունքից. տկանջներից կախում են ոսկեայ, արծաթեայ կամ հասարակ գլիններ. ոտքերին հաղնում են քօշեր, մաշիկներ, հողաթափներ, եւրոպական կիսակօշիկներ և այլն: Զգեստի ամբողջութիւնն ու գոյնը «խատուտիկ ու նաշիւունիկ» կարելի է ասել: Տղամարդկանց հագուստի մէջ միակերպութիւն չկայ և միշտ համապատասխանում է իրենց հարստութեան աստիճանին. միջակ կարողութեան տէր գիւղացիք հաղնում են տանը պատարաստուած շալից չուխայ, հասարակ շիկ կամ «դաղաք»-ից արխալուխ, կապում են կաշուէ հասարակ դօտի, գլխին «մօթալ-փափախ», ոտքերին լայն շալուար և տրեխներ՝ բրդեայ հասա գուլպաների վրայ:

Ամբողջ տարածութիւնը հետաքրքրական տեսարան էր ներկայացնում, որ կողմը երեսդ դարձնում ես՝ շարժումն և աղմուկ է լսում, որ կողմը նայում ես՝ ուրախ և զուարթ գէմքեր ես տեսնում. ամենքի երեսին էլ ժպիտ է փայլում. կարծես մի աներեւոյթ զօրութիւն ուրախութիւն ներշնչած լինի ամենի մէջ: Ահա մի տեղ դեռ նոր են մատաղն եփում, միւս տեղ կանաչ խոտի վրայ բոլորած սփռոցի շուրջը ճաշում են՝ խմելով աղբրի սառը ջուրը կամ ճուլաւէրի կարմիր գլինին և եկող-գնացողին համեցէր անում. մի ուրիշ տեղ զուռնան է ծանր ու բարակ ծուացնում. մի խումբ աղամարդիկ շրջան արած և իրար ձեռք բռնած «եալլի» են պարում և դանդաղութեամբ մերթ մէկ ոտքը շարժում, մերթ միւսը: Ահա և հայ աշուղը «սուփրի ծէրին բազմած» իր սաղն է ածում ու երգում, իսկ շրջապատողներն էլ «տկանջ դարձած» նրան լսում... Այո, ուխտի օրը մի ընդհանուր ուրախութեան օր է: Հայ գիւղացին ամբողջ տարին աշխատանքի մէջ խրուած լինելով՝ ահա այդ օրն ազատ է զգում իրեն առօրեայ հոգսերից ու աշխատանքից

և նուիրում է դուարճութեան, «քէֆի»: Մարդուց պակաս չէ ծանրարեւոյնած և հայ կի՛նն ամբողջ տարուայ ընթացքում: Նա իր ամուսնու հետ աշխատում է դաշտումը. նա է անում տնային բոլոր գործերը՝ լուանում է, թխում է, եփում է, կարում-կարկատում է և այլն. նա սարն է գնում՝ տուարին նայում, իւղ, պանիր, մածուն շինում: Ձմեռը կապերտ, խալիչա, թաղիք է գործում, չուխացու շալ է պատրաստում և այլն: Այդ է պատճառն ահա, որ երբ հասնում է ուխտադնացութեան ցանկալի օրը՝ նա պատրաստում է, դաթայ, նազուք է թխում, կարագ, մածուն, մեղր է «չինում»՝ պլկիների մէջ, մի քանի ջուխտ դեղնամոմ վերցնում, մի քանի կտպէկ աջահամբայր և մատաղացու «թոպլին» առաջն արած՝ ամուսնու և երեսնաների հետ ստաբարիկ դիմում է դէպի ուխտատեղին, իր երեսը նրա սուրբ «ֆողին» քսելու, մոմ վառելու, խոնկ ծխելու, որպէս զի իր «մուրագ»ը կատարի, իր երեսայոցը, ամուսնուն արեւատութիւն տայ, իրենց ցանքսին առատութիւն, տաւարին առողջութիւն, գիւլին խաղաղութիւն, հայոց աղգին հաստատութիւն....:

Ջրի պակասութիւնը ստիպում էր ուխտաւորներին իջնել ցած և անտառի կանաչադարձ հովանեաց տակ որոնել հանգստանալու տեղ: Մենք էլ իջանք բլրից. ճանապարհին մեզ պատահեց Դիւղազարակ գիւղի Տէր-Սարգիս քահանան, որի մասին առաջուց արդէն շատ բան էինք լսել: Տէր հայրը մի քանի հարցումներ տալուց յետոյ հրաւիրեց մեզ իր մօտ ճաշի սեղան՝ «Եթէ մեզ մօտ դաք՝ շատ լաւ կլինի, մանաւանդ որ «սողանդար» էլ ունեմ. ես ուրիշ քահանաների նման չեմ, ես էնպիսի մարդ եմ, որ եկեղեցու մէջ քահանայ եմ, դուրսը նոյն քէֆ անող աշխարհականը»: Տէր հօր խօսքերն ապացուցանում էին նրա դէմքի անհող արտայայտութիւնն ու քթի տակ երգած «Լուսնեակ գիշերը»: Ամբողջ դաւառում Տէր-Սարգիսը յայտնի է իրբն լաւ հմայող. չար լեզուները զանազան բաներ էին պատմում այդ քահանայի հմայութիւնների և քաջագործութիւնների մասին: Չնորհալալութիւն յայտնելով տէր հօրը՝ դիմացինք դէպի մօտիկ բլրակը և հանգստացանք ծառերի ստուերի տակ. այդ միջոցին կառքերով ուխտատեղի եկան Լօռու գաւառապետը, օստիկանապետը և ուրիշ պաշտօնեաներ՝ իրենց ընտանիքներով: Մեր նստած տեղից մի փոքր հեռու ճաշում և դուարճանում էին Զալալօղլում եղած զօրադնդից մի խումբ հայ զինուորներ. մեզ տեսան թէ չէ՝ հրաւիրեցին մասնա-

կից լինել իրենց սեղանին. մենք շնորհակալութիւն յայտնեցինք և շնորհեցանք. սակայն նրանք այնքան թախամեծեցին, որ դատարարակի թոյլտուութեամբ մօտեցանք նրանց սեղանին, մի մի կտոր մատաղի միս և կէս կէս բաժակ գինի վայելելով՝ բարեմաղթութիւններ արինք և վերադարձանք մեր տեղը: Այդտեղ թաւականին երկար սպասեցինք, որովհետեւ ճաշին հրաւիրուած էինք Գեղամ հայր սուրբի մօտ, իսկ նա իրբեւ Լօռուայ գործակալ— գրագրուած էր «էրէ»ներ և մատաղի մորթիներ հաւաքելով: Թէ սր. Յարգիս ուխտատեղաւ և թէ մատաղի մորթիներէց գոյացած արդիւնքը պատկանում է Ներսիսեան դպրանոցին: Ամեն տեղ, հայ գիւղերում, աւանդական սովորութիւն է, որ մատաղի էրէն և մորթին կամաւ յանձնուած են քահանային կամ երեցփոխին. Լօռեցիք կարծես թէ սիրով չէին ապլիս այդ բաժինը և դորձակալը շատ անգամ օտիւսուած էր լինում՝ մտաւոր ձեռքին ներկայանալ մատաղատիրոջը: Հարկւրի չափ մորթի էր հաւաքուել և հատը 15 կոպէկով ծախուել: Վերջապէս եկաւ հայր սուրբը և ժամը 2-ին անցանք ձորակի միւս կողմը, ուր բոլորովին ազատ էր ուխտաւորների աղմուկից. «ուրթ»ի մօտ եղած ծառի հովանու տակ փռեցինք կապերաները, շուրջը նստեցինք և փափուկ հացն ու լօշն ուղղակի կապերաների վրայ դրինք. աման առուած բանը դոյութիւն չունէր մեր սեղանի վրայ, լօշն ու տերեւներն էին բռնում դրա տեղը: Էրէներին «Խաչլաման», խորովածը, պանիրն ու մածոնն էին մեր ձոխ ճաշի համադրամները: Ճաշն ուրախ անցաւ:

Մեր ճաշած տեղից քիչ վերեւ գտնուած էր Գուրգան գիւղի «բինան» կամ «հայլան»—ամաւրանոցը: Մեզնից շատերը քաղաքացի լինելով՝ չգիտէին, կամ աւելի լաւ է ասել՝ չէին տեսել՝ թէ ինչ է «հայլան», «դագեան» կամ թէ ի՞նչպէս են պատրաստուած պանիրը, իւրը և այլն: Այդ պատճառով անհրաժեշտութեամբ արանօք մեզ հետ եղող Գուրգանի քահանան յանձն առաւ տոնել մեզ «բինան» և ցոյց տալ բոլորը:

Գարունը բացուելուն պէս գիւղացիներն իրենց տաւարն ու ոչխարին հօտերն առած՝ բարձրանում են լեռնային ամաւրանոցները, որոնց նրանք անուանում են «Իւրթ», «բինա», «հայլա», «հայլաղ» և «սար»: Գիւղի համայնքը կամ մի քանի տուն միասին վերցնում են արքունի կամ մասնաւոր կալուածներից որոշ սուրբով արօտներ և կոչում իրենց «սար»: Սարըցիք կամ սարուորները չինում են իրենց ընակութեան համար վրաններ, որոնց մէջ անց են

կացնում տմբողջ ամառը: Այդ վրանները կոչում են «ալաշուխ» կամ «գաղեայ»։ առաջինն ավելի մեծ, կանոնավոր և գեղեցիկ է քան դագեան. երկուսն էլ ծածկուած են հաստ թաղիքով՝ այնպէս որ անձրևի ջուրը ներս չէ թափանցում: Ալաշուխը հետեւալ կերպով են պատրաստում. գետնին խփում են մի բաւականին հաստ սիւն, սիւնից մի քանի արշին հեռաւորութեան վրայ շրջանաձև գետնին ամրացնում են ամուր ձողեր. այդ ձողերի ծայրերը բերում ամրացնում են սիւնի ծայրին եզոդ հաստ առիտակից և այդպիսով ձողերը կազմում են մի կիտագունա, որի գլուխը ծածկում են հաստ և անթափանց թաղիքով ու թոկերով պինդ կապում՝ անձրևից ու ցրտից ապահով պահելու համար: Ներքեից շրջապատում են եղեգնեայ ցանկապատով և մի անցք էլ թողնում են մուտքի համար՝ իրրե դուռը: Դագեան նոյն ալաշուխն է՝ միայն ավելի հասարակ, առանց սիւնի և առհասարակ հիւսած է լինում ուռենու ճկուն ճիւղերից:

Հայ գիւղացիները գլխաւորապէս երկրագործութեամբ զբաղուած լինելով՝ տմբողջ ընտանիքով չեն գնում «ուսու», այլ միայն ընտանիքի մի քանի անդամները—գլխաւորապէս կանայք: Անասնապահութեան ասպարիզում հայերը յետ են մնացել թուրքերից. համարեա թէ ամբողջովին վերջիններիս ձեռքն է պանրի և իւղի արտահանութիւնը: Լօռուայ արօտները շատ յարմար են անասնապահութեան համար և մեծ օգուտներ կարող են տալ կանոնաւոր գիւղատնտեսութեամբ պարապողներին: Լաւուար և նրա մերձակայ սարերի արօտները ոչնչով յետ չեն մնում Զուլեցերիայի աշխարհահռչակ «ալմ»-երից:

Վրանների արտաքին դիտողութիւնը վերջացնելուց յետոյ՝ մտանք տէր-հօր վրանը և տեղաւորութեանը գոյնգոյն թելերից գործուած գորգի վրայ: Ամենից շատ հետաքրքրում էինք իմանալ թէ ինչպէս են պատրաստում «ջիլ» կոչուած պանիրը, որ ամենագործածական պանրի անսակն է այս կողմերում. մեր հետաքրքրութեանը գոհացումն ապու համար Տէր-Ծփրեմը հրամայեց հէնց մեր աչքի առաջը պատրաստել «ջիլ» պանիրը. տանտիկինը վերցրեց սերը քաշած կաթը, եփ սուեց, մէջը «մայեա» գցեց և երբ հեղանիւթը մակաղութեց՝ սկսեց այնքան հարել, մինչև որ ստացուեց մի տեսակ մածուցիկ հիւթ. յետոյ ձեռքով երկար ձև տուեց նրան, ջուրը քամեց, օրպէսզի շորանալուց յետոյ աղ անէ և պահէ: Զիլ պանիրն այնքան էլ համեղ չէ: Պանիրը գլխաւորա-

պէս պատրաստում են դարձնում ամիսներում, իսկ ամառը՝ իւր, որովհետեւ առաջին ամիսներում կաթն աւելի նոսր և ջրալի է լինում, իսկ ամառը թանձր և իւրաքանչիւր Սոփորական պանիր շինելու համար վերցնում են «գոլ» կաթը, մէջը ձգում են որոշեալ չափով «մայկա»։ կաթը մակարդուում և ստացւում է պանրաձեղանաձեղ, որից ջուրը մզելով և մի փոքր տաք տեղ դնելով՝ ստացւում է «գլուխ պանիրը»։ Մայիսն պատրաստում են ոչխարի կամ հորթի ստամոքսի վրայ դնուած ճարպային փառից՝ հետը խառնելով դանդաղան թթու համեմունքներ։ այդ բոլորն ածում են կեռնձի մէջ և բերանը փակելով՝ դնում են տաք տեղ։ մի քանի օրից յետոյ արդէն պատրաստ է լինում «մայկան»։ Մածուն պատրաստելու եղանակն աւելի պարզ է։ կաթը եփ տալով թողնում են մինչև գաղջանալը և ապա դրա մէջ ձգելով մի գլուխ հին մածուն՝ երեսը ծածկում են և թողնում։ մի քանի ժամից յետոյ արդէն պատրաստ է լինում մածունը։ Իւր պատրաստելու համար «հաւաքը» — մի քանի օրուայ հաւաքուած մածունը — ածում են խնոցու մէջ, որ մի որևէ տեղից կախուած է լինում և սկսում են հալել՝ հետզհետէ մէջը քիչ գաղջ ջուր խառնելով։ իւրի բշտիկները դուրս են գալիս թանի երեսը և հետզհետէ շատանալով ու հաւաքուելով՝ կոշտանում և կտոր կտոր իւր է դառնում։ Այդ կոշտները հաւաքելով քամում են, որ թանից լաւ մաքրուի, լուանում են ջրի մէջ և ող անելով պահում տակերի մէջ։ Թանը եփ են տալիս, քամում և ստանում են «ժափիկ» կամ թէ ջուրը քամելով չորացնում են և ստանում «չորաթան»։ «Մերը» տաքացրած կաթի սերտացած երեսն է, իսկ «արաթանը» հում կաթի երեսը, իւրաքանչիւր թանձր մասը։

Այս գիտողութիւններն ու նկատողութիւններն անելով մեր յիշատակարանի մէջ՝ «գաթայ»-ով թէյ խմեցինք և մեր սրտանց շքանորհակալութիւնը յայտնելով «սարկոտըներին», ճանապարհ ընկանք գէպի Վարդաբլուր գիւղը, մեր իջևանը։ Ուխտաւորները ցրուել էին և ամեն ինչ խաղաղ էր։ ամենալաւ ապաւորութեան ներքոյ վերադարձանք գիւղը՝ զմայրուելով երեկոյեան վերջալուսի շքեղ տեսարանով և շրջապատող բնութեան գրաւիչ տեսքով։ Գիւղը բաւական գեղեցիկ տեղ է չինուած, մօտակայ գետակը գիւղի անունն է կրում։ Բնակիչները բոլորն էլ հայ են և պարսպում են երկրագործութեամբ ու անասնապահութեամբ։ ունի քարաշէն եկեղեցի և աղբիւր, որ վերջին ժամանակներս է չինուած։ Գիւղի տնե-

մից շտաբերը քարաշէն և տանիքաւոր են։ Այս գիշեր էլ մնալով այս գիւղում՝ առաւօտը վաղ պէտք է ճանապարհ ընկնենք դէպի Լօռի բերդը, երբեմն Գուգարաց աշխարհի մայրաքաղաքը։

Լօռի, 29 յուլիսի, երկուշաբթի։

Առաւօտեան ժամի 6-ին արդէն թէյն խմել և դոյզ-դոյզ պատարաստ կանգնած էինք. դաստիարակը բոլորիս կողմից շնորհակալութիւն յայտնելով մեզ հիւրասիրողներին՝ ճանապարհ ընկանք դէպի Լօռի բերդը, որ այժմ մի աննշան գիւղ է։ Գիւղեցիկ առաւօտ էր. արեւը շուտ շուտ թափնում էր ամպերի տակ. ճանապարհորդութեան յարմար օր էր, ամեն տեղ դուարթութիւն, ամեն տեղ ծաղիկների անուշահոտութիւն է բուրում։ Անցնում ենք դաշտով՝ անընդհատ երգելով և նուագելով։ Երկու ժամաչափ ճանապարհ անցնելուց յետոյ՝ հասանք ուտա գաղթականների Նիկոլայեւկա գիւղը. այս գիւղը կանոնաւոր դժով փողոցներ և կարգին աներ ունի. չըջակայ ընդարձակ տարածութիւնը ծածկուած է արևածաղիկ և կաղամբի ցանքերով։ Նիկոլայեւկայի հիւսիսային կողմից անդնդախոր ձորի միջից հոսում է Չորագետը՝ արևմուտքից դէպի արևելք. գետի միւս ափին արդէն երևում են աւերակ բերդի կիսաւեր աշտարակների ծայրերը։

Նախկին մայրաքաղաքի մնացորդների տեսքն արդէն բաւական էր ամբողջ անցեալը մեր երևակայութեան մէջ զարթեցնելու. աչքիդ առաջ կենդանանում է կարծես Գուգարաց աշխարհի տէր, Աղուանից թագաւոր Դաւիթ Անհողինը՝ ամենի ձիւ վրայ նստած և թիկնապահներով չըջապատուած՝ դիտում է այդ ժայռերը՝ վրան բերդ շինելու նպատակով. արդէն տեսնում ես բերդը կառուցուած և իշխանական մայրաքաղաք դարձած։ Աչքիդ առաջ կենդանանում է ահա Լօռուայ դժբաղդ Գիւրիկէ թագաւորը, որ իր դուռտըր թշնամու, Ալիսալանի ձեռքն է տալիս՝ իր հայրենիքը կործանումից և աւերումից ազատելու համար։ Մտաբերում ես այդ քաղաքում կադմուած եկեղեցական ժողովը՝ «շարժական սեղան» և այն խնդիրների առթիւ. այդտեղ է և այդ խնդիրների յարուցանողը, Ջաքարէ սպասալարը. ահա կարծես թէ լսում ես Խաչատուր Տարօնեցու առաջին անգամ այդտեղ երգած «Խորհուրդ խորին» հոգեշունչ տաղը...։ Վերջը—Քաղաքը պաշարում են թշնամիները և ամեն լուպէ սպառնում ամենին կոտորել և ամեն բան աւելն ու վրայ անել։ Մեծ իշխանը յանձնելով քաղաքն իրենից թոյլ իշխանների

ձևերը՝ վառարում, թագնություն է մի այլի մէջ. թշնամին կործանում է քաղաքի պարիսպները. ժողովուրդն այրաբար կռւում է, բայց թշնամին շուտով աւերում է քաղաքը և անխնայ կողոպտում ու կոտորում է ամենքին: Ծուփն ամպերի պէս է երկկնք բարձրանում. գետի երեսը մարդկանց դիակներով է ծածկւում, մեռնողների ճիչն ու ողորդ երկկնք է բարձրանում...: Ամայի բերդ, խորատակուած ոյժ, սրտածմբիկ տեսարան. տեղ տեղ դուրս ցցուած աշտարակներն ու շէքերի մնացորդներ տեսնելիս և երեսկայութիամբ անցեալը մտաբերելիս՝ մարդ չի կարող չզգացուել, չարտասուել...:

Նիկիոյայեւկա գիւղից դէպի Լօուի երկու ճանապարհ կայ. մէկը դաշտով, որ ահագին պտոյտ է, իսկ միւսն ուղղակի ձորի միջով, որ բաւական դժուարագնաց է. մենք ընտրեցինք վերջինը և ընթացքներս ուղղեցինք դէպի ձորը: Անցնելով մի ընդարձակ և երեսը մամուսպատ ճահճանման լճի մօտով՝ հասանք ձորի գլուխը և մի հայ ճանապարհորդի ցուցմամբ՝ իջանք մի նեղ շաղով գետի ափը և կանգ առանք: Զորագետը փրփուրը բերնին, աղաղակելով ու մռնչելով արագ վազում է նեղ ձորի միջով և այնքան խորն է, որ ոտքով անկարելի է անցնել, իսկ կամուրջ էլ Աստուած տայ, թէ և երբեմն եղել է կամուրջ, որի հետքերն երևում են: Զուարած կանգնած ենք գետափների ժայռերի վրայ. ոմանք փորձում են ոտքով անցնել՝ չի լինում. լողալ էր բոլորը չգիտեն: Մեր բաղդիցքն այդ միջոցին հասան երկու ձիաւորներ և բոլորիս հերթով անցկացրին ջրի միւս ափը: Մեզնից մէկի գետն անցնելու միջոցին՝ դատարակի շալն ընկաւ ջուրը և արագ ցած էր իջնում գետի ընթացքով. մեր ընկերներից մէկը, որ լողալ գիտէր, իսկոյն զգեստներով ընկաւ ջուրը, հասաւ, բռնեց շալը և մեր կեցցէների աղմուկով խլացած՝ դուրս եկաւ ափը: Դատարակը գետ յանդիմանեց նրան՝ զգեստով ջուրն ընկնելու առթիւ, որովհետև զգեստները ջրով լցուելով՝ կարող էին արգելք լինել լողանալուն և նա գետի արագընթաց հոսանքից յաղթուելով՝ կարող էր խեղդուել. բայց միւս կողմից գովեց նրա արիւնքիւնն ու քաջաստուգիւնը և պատուիրեց իսկոյն հանել բոլոր թաց զգեստները և պահեստի տաք շորերը հաղնել:

Գետի միւս ափն անցնելով՝ սկսեցինք բարձրանալ դէպի բերդը. ժայռերի վրայ երևում էին բուրգերի հետքեր և ամբուլթիւններ. արեւելեան կողմից հոսում է Միսիսկանայ ջուր կոչուած գետը:

տակը և միանում Ձորագետի հետ: Այս ձորն էլ գետակի անունով կոչւում է Միսխանայ ձոր:—Միսխանայ պարսկերէն նշանակում է պղնձահանք և երեւի այս ջուրն էլ այդպիսի մի հանքի մօտով կամ միջով անցնելով այդ անունն է ստացել: Ձորագետի և Միսխանայի միանալու տեղն եղած շաւիղը կոչւում է ջրգողի ճանտապարհ, որ մի գաղանի անցք է բերդի միջից. բերդը պաշարուած ժամանակ երեւի այդտեղից են ջուր կրելիս եղել. շաւղի մուտքը ապահովացրած է ամուր բուրգով: Այդ մուտքի դիմացը, գետի միւս ափին երևում են մօտ եօթը ջրաղացների հետքեր: Ձորագետի աջ կողմը, ժայռի մէջ երևում է մի մտաբաձն շինուածք. աւանդաբար պատմում են, որ այդտեղ տալերիս է եղել մի ճշնաւոր և շարունակ արքայի համար աղօթելիս. այդ ճշնաւորը գէշեր ցերեկ աշխատելով այդ ժայռերի մէջ առուններ է փորել և գետից ջուր տանելով այդտեղ ագարակ է տնկել:

Նոյն կողմը, ձորի մէջ, Միսխանայ գետակի աջ ափին, լեռան սակից բլրում է մի առատաբուրդ սղբիւր, այս կողմերում եղածներէից ամենալաւը. իր պարզ ու վճիռ ջրերը նոյն խել հեռուից բերկրաման փայլեցնելով այդ աղբիւրը ժողովրդից ստացել է «Լուսաղբիւր» անունը: Ձորից բարձրանալով նախ հանդիպում էք առաջին պարտալին, որից քիչ հեռու գտնւում է երկրորդ պարտալը. այս պարտալի մէջ, աջ կողմը, բացուած է այն կամարակալ անցքը, որ դէպի դուրս է տանում: Մուտքի վրայ գտնւում է պարսկերէն լեզուով մի արձանագրութիւն, որից որոշւում է միայն «ղալա» (բերդ) բառը:

Ժամը 9-ից քիչ անց էր, երբ մտանք բերդի արեւելեան այդ կամարակալ մուտքից և մի փոքր հանգստացանք հիւսիսային մեծ մուտքի կամարի շուքի տակ: Տխուր և ճնշող տպաւորութիւն է անում մարդու վրայ՝ երբ բերդի մուտքից ներս նայելով բացի կիսաւեր աշտարակներից և աւերակ մատուռներից ոչինչ չես տեսնում. այդ փառաւոր քաղաքից, որ իր ճոխութեամբ և զանձերով թշնամու արծաթսիրութիւնն ու նախանձը շարժից, բացի մեծ-մեծ քարակոյտներից ոչինչ չէ մնացել: Զատ կարելի է այդ աւերակներն էլ ոչնչացած և Լօռին էլ Արմաւրի ու Արաւշատի նման հողաբլուրներ միայն դարձած լինէին, եթէ չլինէր դրա անաուիկ դիրքը և բնութեան բնական պաշտպանութիւնը: Բերդն, ինչպէս երևում է, ձախ կողմից էլ կամարակալ մուտք է ունեցել, որից այժմ մնացել են միայն կամարների հետքերը:

Բերդն անառիկ է. արևելքից, հարավից և հարավ-արևելքից չըջապատուած է անդնդախոր ձորերով. արևելեան կողմը Դէքէաի ձորն է. այսպիսով բերդն երեք կողմից ամրացրած լինելով բնական անդնդախոր խորամանկերով, միայն անպաշտպան կարող էր մնալ հիւսիսից, որովհետեւ դաշտ է և աղակալով մատչելի. ահա այդ կողմից էլ բերդն ապահով դրութեան մէջ են գրել՝ կառուցանելով հաստ պարիսպներ՝ բուրգերով և աշտարակներով: Մարդ տեսնելով բերդի այսպիսի անառիկ դիրքը, ամուր, երկկարգ պարիսպների հետքերն ու աշտարակները, երեք կողմից նրան չըջապատող ձորերն ու ժայռերը՝ զարմանում է թէ ինչպէս է կարողացել թշնամին մուտք գործել և աւերել. բայց ինչ պատճառով իշխանների թուլութիւնը, մեղկութիւնն ու վախկոտութիւնը պատճառ են լինում նոյն իսկ բնական ամրութեանց կործանման: Ահա թէ ինչպէս է նկարագրում Կիրակոս պատմագիրն այս բերդի աւերումը:

Չաղատայ թաթարների զօրովարը լսելով Լօռի քաղաքի ամրութեան, նրա ճոխ հարստութեան և Ջահնշահ իշխանի տահլին գանձերի մասին, առնելով իր հետ ընտիր սպառազէններ և բաղմաթիւ մեքենաներով ու պատրաստութեամբ գալիս պաշարում է այդ քաղաքը: Իսկ Ջահնշահ իշխանը լսելով այդ՝ առնում է իր կիսն ու որդիքը, գաղտագողի փախչում է ձորը և ամրանում մի այլի մէջ՝ քաղաքը յանձնելով իր սաորադրեալ իշխաններին, որոնք կանացի և թոյլ մարդիկ լինելով՝ իրենց յոյսը պարիսպների ամրութեան վրայ դրած՝ փոխանակ թշնամուն դէմ դնելու՝ պարապած էին արեցողութեամբ և զեղխութեամբ: Թշնամին փլցնում է պարիսպների ներքին մասը և ներս խուժում. քաղաքի բնակիչները անպաշտպան մնալով՝ երբ տեսնում են թէ քաղաքն առնուեց՝ վախից սկսում են ձորը թափուել. թշնամին անխնայ կոտորում է այդ մարդկանց, կանանց և մանուկներին, նրանց ստացուածքն աւարի է առնում: Գտնում են և Ջահնշահ իշխանի գանձերը, որ պահուած էին մի առանձին ամուր շինութեան մէջ, որի բերանն աչքան նեղ էր, որ միայն փող ձգելու համար էր բաւական, իսկ հանելու—ոչ: Թշնամին կոտորում է նոյնպէս Ջահնշահի իշխաններին, որոնց յանձնուած էր քաղաքի իշխանութիւնը և դիմում դէպի ուրիշ նշանաւոր բերդեր և քաղաքներ, որոնցից շատերն առանձին կործանուած և երբեմն էլ խաբէութեամբ:

Բերդի հիւսիսային կողմը, տափարակ տարածութեան վրայ

երևում են բազմաթիւ աների հետքեր. այդ վայրը կոչւում է «Աղ-
շահար»—սպիտակ քաղաք—և երևի քաղաքի թաղերից մէկն է
եղել: Բերդից դէպի արեւելա-հարաւ, այժման Նիկոլայեւկա գիւղի
տեղը մինչև ձորի գլուխը կոչւում է «Ամրակից»—երևի ամրոցին
կից:—Բերդի արեւելքից-արեւմուտք ձգուող պարսպի երկարութիւնը
300 արշին է, իսկ լայնութիւնը 21 արշին 11 վերշոկ: Պարսպի
աջ դրան լայնութիւնն է 5 արշին 9 վերշոկ. մուտքի բուրգի
բարձրութիւնն է 13 արշին: Արտաքին պարսպի աշտարակների մէջ
եղել է մի եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդուած է և համարեա
թէ ամբողջովին տւերուած:

Արեւելեան պարսպից ոչ հեռու գտնուում է մի փոքրիկ, ան-
սիւն, կամարակապ և սրբատաշ քարից շինուած քառակուսի շէնք
5 արշին և 13 վերշոկ մեծութեամբ. այդ շէնքը թէ դրսից և թէ
ներսի կողմից կառուցուած է եղել սրբատաշ քարերից, ըստ այժմ
դրսի պատերի քարերը բոլորը քանդել ու տարել են՝ երևի նոր
շինութիւնների համար: Արեւելեան պատի վրայ կան երեք կամա-
րակապ խորաններ, որոնք երևի պատարագամատոյց խորաններ
են եղել. տաճարութեամբ այս շէնքը համարւում է Դաւիթ Ահո-
ղին թագաւորի կիող դամբարանը: Պատմում են, որ երբ թաթար-
ները տիրում են քաղաքին՝ քանդում են այդ դամբարանը՝ գանձ
կամ թանկագին իրեր գտնելու յուսով և սակըները հանելով՝ այրում
են: Այս շէնքի մուտքի աջ կողմի մի քարի վրայ գտնւում է մի եղ-
ծուած արձանագրութիւն, որից որոշւում է միայն թուականը. «Ի թը-
ուին 2»—(700 հ. թ. 1251 Վրկ. թ.): Յիշելով այն աւանդութիւնը՝
թէ Խաչատուր վարդապետն այս եկեղեցումն է առաջին անգամ երգել
«Խորհուրդ խորին»—մենք խորին ակնածութեամբ և հոգեկան
վրդովմունքով երգեցինք այդ սրբազան վայրում «Խորհուրդ խո-
րին»ը և մեզնից շատերը արտասուքն աչքերին դուրս եկան:

Բերդի արեւելեան կողմը, ձորի գլխին, եղել է մի ընդարձակ
եկեղեցի, որից մնացել են պարիսպների մնացորդները և մի քա-
նի խաչքարեր: Իսկ հարաւային կողմը, ձորի գլխին, ձիթահանքի
հետքեր են երևում, որոնց ահագին քարերը ցայժմ էլ մնացել են:
Նոյն կողմն է գտնւում և այն մեծ այրը, ուր, ինչպէս աւանդա-
բար ասում են, ամրացել է Չահնշահ իշխանը: Ամրոցի հարաւային
կողմը գետի ընթացքը հանդարտ է. այդ տեղը կոչւում է «Խան-
գեօլ»—խաների լիճ—ասում են, որ իբրև թէ երբ բերդն ընկնում
է թուրքերի իշխանութեան ներքոյ, խաները մաքրել են սալիս

դեռի այդ մասը քարերից՝ լողանալու համար: Նոյն կողմն են գրանուում այն կամարածե շինութեան հետքերը, որի որմերի մէջ գրանուում են աւազանոման խորաններ. որմի մէջ շինուած են կաւից շինուած երկկարդ խողովակներ. թէ ըստ ձեւի եւ թէ ըստ աւանդութեան՝ այդ խորանները համարուում են բաղանիքներ. ջուրը բերդի տակից իրբն թէ գալիս է եղել վերայիշեալ խողովակներով: Բաղանիքի ճանապարհին մի քանի տեղ պատահեցինք սանդի նման մէջը փորուած մեծ-մեծ քարերի, որոնց մէջ իրբն թէ վառօդ են պատրաստելու եղել:

Բաղանիքից 5—6 սառէն հեռու, բերդի նոյն կողմը, գտնուում են մի շէնքի հետքեր, որ ըստ աւանդութեան՝ թագաւորական սլալատ է եղել. շէնքն ուղղակի ձորի գլխին է, գեղեցիկ դիւրը եւ բաւականին ընդարձակ հորիզոն ունի: Այդտեղից դիմեցինք դէպի գիւղի այժմեան եկեղեցին, որ գտնուում է բերդի հիւսիսային պալատի մօտ եւ երկու սրահների վրայ հաստատուած մի կամարակապ շինութիւն է 9 արշին, 3 վերշոկ լայնութեամբ եւ 16 $\frac{1}{2}$ արշին երկարութեամբ: Այս շէնքը վեց դմբէթներ ունի, որ շինուած են աղիւսից՝ թէև որմերն ու կամարները սրբասառ քարից են: Այս շէնքը սկզբում երեւի ուրիշ նպատակի է ծառայելիս եղել: Վերջերը թուրքերը տիրելով դարձրել են մզկիթ, իսկ այժմ եկեղեցի են դարձրել՝ ցածր բեմով եւ աղքատ սեղանով: Գիւղն առանձին քահանայ շունենալով՝ (բաղկացած է 26 տնից) մօտիկ Լեջան գիւղի քահանան է հովուում սրանցը եւ պատարագ մատուցանում այս սրբավայրում:

Եկեղեցու հիւսիսային կողմը գտնուում են երեք կամարապ խորաններ, որոնցից միջին կամարի տակ գտնուում է եկեղեցու դուռը եւ մի գեղեցիկ քանդակուած խաչքար՝ սե քարից շինուած: Հիւսիսային պարսպի տակ աւազան է եղել, բայց այժմ բոլորովին լցուած է հողով եւ ոչինչ չէ երևում:

Այս դիտողութիւններն անելու միջոցին բաւական յոգնելով սիրով ընդունեցինք տեղական երեսփոխի առաջարկութիւնը՝ մի փոքր հանգստանալու իր յարկի տակ. մեզ հետ էր նաև Լեջանի Տէր-Սարգիս քահանան: Լօռուայ գիւղերից շատերում գիւղացիներն արդէն սկսել են դուրս գալ գեանափոք որջերից եւ գեանի երեսին քարուկրից աներ շինել. վերջին տեսակին էր պատկանում եւ երեսփոխի տունը: Բաւականին մաքուր եւ լուսաւոր սենեակում տեղաւորուեցանք՝ մի մասը հողէ յատակին փռած կապերտների եւ միւս

մասն էլ թախտի վրայ, որ գիւղացու տան անհրաժեշտ մասն է։ Նստեցինք թէ չէ, մեր ուշադրութիւնը գրաւեց «բուխարու» ճակատին դուռած մեծ քարը, որի վրայ արձանագրուած էր. «Այս է հանդիսա տիկնաջ... յիշեցէք ի ֆս. ի թուին 21Բ»—(732—1283)։ Մեր հարցմանը՝ թէ սրահղից են բերել այդ քարը, տանտէրը կարճ պատասխանեց—գերեզմանատնից։ Բանից դուրս եկաւ, որ գիւղացիները նոր աներ շինելիս՝ անխնայ կերպով տանում են բերդի աւերակները ու գերեզմանների սրբատաշ քարերը և անարգել գործ դնում. նոյն իսկ Ջալալօղլուց եկել և աւերակների քարերից տարել են... տէր չկայ, արիական չկայ... խեղճ մեր նախնիք և աւելի եւ թշուառ ու տգէտ հայրենակիցներ. բաւական չէր արիւնհարբու թշնամու սուրն ու հուրը, որ մեր ձեռքով էլ ենք աւերում մեր սրբութիւններն ու նախնեաց սրբազան յիշատակները...

Շնորհակալութիւն յայտնելով մաղ հիւրասիրողներին՝ ճանապարհ ընկանք դէպի բերդի պարիսպը, ուր թողել էինք մեր իրիզէնները՝ ճանապարհին տէր-Սարգիսը մեր ուշադրութիւնը դարձրեց բերդի մուտքի աջ կողմը գտնուող մի հնութեան վրայ. այդ շէնքը բաղկացած էր երկու կամարակապ սենեակներից, որոնք միմանեց մէջ են բացւում. որմերի մէջ երեսում են երկկարգ կաւայ խողովակներ, իսկ տանիքը բաղկացած է երկու գմբէթներից։ Այս շէնքը թալոթովին նման է բերդի հարաւային կողմը գրանուած և բաղանիք համարուած շէնքին և երեւի նոյն նպատակին է ծառայելու եղել. այս գմբէթաղարդ շինութիւնն այժմ մաքարի տեղ է ծառայում գիւղացիներից մէկին։

Հասնելով բերդի մուտքին՝ նշանակեցինք ծանրաշափի (բարձաբի) դիտողութիւնը—Լօուին գտնւում է ծովի մակերեսից 1490 մետր բարձրութեան վրայ—և ուղում էինք շափել նոյնպէս օդի ջերմութեան աստիճանը, բայց ջերմաչափն էլ իր տեղը չը գտնուեց. գիւղի երեխաներն իրենց անծանօթ այդ իրն երեւի թանկադին բան համարելով՝ վերցրել տարել էին. մեր երկու «աստղաբաշխներն» էլ ի հարկէ նկատողութեան արժանացան իրենց այդ անզգուշութեան համար, որի հետեանքները շատ զգալի կլինէին՝ եթէ դաստիարակի մօտ չգտնուէր պահեստի ջերմաչափը։ Թէպէտ քեօխուէն խոստացաւ ջերմաչափը գտնել և Ջալալօղլի ուղարկել, բայց մենք այլ ևս տեղեկութիւն չստացանք այդ մասին։

Ժամի մէկ և կէսին թողնելով Լօուուայ աւերակները՝ տխուր տպաւորութեան ներքոյ ճանապարհ ընկանք դէպի Ջալալօղլի. ան-

ցունք գերեզմանառնող, ուր կային բազմաթիւ խաչքարերի պատուանդաններ, իսկ խաչքարերն անյայտացել էին: Մեզ ընկերակցող քահանան, Լեջանի ծխատէրը, մեր շնորհակալութիւններն ընդունելով՝ բաժանուեց մեզնից և դնաց իր գիւղը: Ջալալօղլին հետեւ չէ Լօուուց, բնգամնին երկու ժամուայ ճանապարհ է. անցնում ենք հնձած արտերի միջով: Արեգակն այրում էր, բայց բարեբաղդաբար դով քամի էր փչում և արեգակի տասն ոսկգալի դարձնում: Անցորդներ չէին պատահում: Հետուից Ջալալօղլու տեսքը շատ գեղեցիկ է, թէև տները խառն ի խառն են դասաւորուած: Ժամի երեքն էր, երբ Ջալալօղլու ձորն իջանք, որ լիքն էր գինուրներով: Ուղղակի ձորի գլխին դտնում է գիւղաքաղաքի սբ. Աստուածածին եկեղեցին, որ եօթը տարուայ չէր է. բարձրանալով ձորի միջից՝ նստեցինք այդ եկեղեցու՝ դաւթում՝ մի փոքր հանգստանալու: Մեր անողոր հագուտաի ձեն իր վրայ էր դարձնում անցորդների ուշադրութիւնը, որոնցից շատերը գիմում էին ուղղակի մեզ և հարցնում թէ ո՞վքեր ենք. ամենից շատ մեզնով հետաքրքրւում էին հայ զինուորները. զբանցից երկուսը մօտեցան մեզ և խօսակցութիւն սկսելով յայտնեցին, որ Արցախի կողմերիցն են. ծանր էր թւում նրանց զինուորական ծառայութիւնը՝ թէև հրացանաձգութեան արհեստում—իրենց ասելով—առաջին մրցանակներն իրենք էին ստացել:

Կէս ժամ դաւթում սպասելուց յետոյ՝ մեզ իմացրին, որ բնակարաններս պատրաստ է. բազարի միջով անցնելով՝ հասանք մեր իջևանը. մեզ հիւրասիրողը Յարութիւնեան ազգանունով մի պատուական ընտանիք էր. զբանց ազգական երիտասարդ պ. Արշակ Պապկանը առաջնորդեց մեզ մի կէս-երասրական և կէս-տօթական ճաշակով կահաւորուած սենեակ, ուր և հանգստութիւն տուինք մեր խոնջացած անդամներին:

Ժամի 5-ին երկինքը պատած էր մութ ամպերով, որ սաստիկ փոթորիկ էր գուշակում. շուտով սկսեց անձրև տեղալ, որ քանի գնում—սաստկանում էր: Անձրևի հետ միացաւ սաստիկ հողմը. ուժգին քամին խռնարեցնում էր ահագին ծառերի կատարներն և կարծես սպառնում էր արմատահան անել նրանցը. անձրևը հեղեղի նման էր թափւում երկնքից: Երկինք ու գետին կարծես տակն ու վրայ էին լինում: Զուտով փոթորիկն անցաւ, բայց անձրևը շարունակում էր տեղալ: Սաստիկ փոթորիկը պոկել ու ցած էր գցել սբ. Աստուածածին եկեղեցու գմբէթի խաչը և բա-

ւականին ծանր իրեր օգր բարձրացրել և հեռու տեղեր շարտել։ Մեզ հիւրասիրող երկու պարտները գնացել էին ուսկանոյ ձուկ որսալու։ Նրանք թէև որսոյ ծանրաբեռնուած վերադարձան, բայց սաստիկ դրշուել էին։ գնալուց առաջ նրանք մեր անուններն ու որտեղացի լինելը հարցնելով՝ իւրաքանչիւրիս բաղդին ուսկան էին գցել։ Թիֆլիզցիներն անբաղդ էին դուրս եկել։ Էրդրումցիներ, թաւրիզցիներ, ախալքալաքցիներ բաղդաւոր։ Իսկ երբ ուսկանը ձգելիս բացադանչել էին. «եւ մշեցու սև բաղդ», ամենամեծ ձուկն էր ընկել դամբի մէջ։ Այս զրոյցներով թէյ խմեցինք, ընթերցեցինք և դարգելով ծածկուած յատակի վրայ տարածուելով՝ անուշ քնեցինք։

Ձալալօղլի, 30 յուլիսի, երեքշաբթի։

Օրն ամպամած է, դուրսը սաստիկ ցելա։ Ոտքով ճանապարհորդութիւն և անձրև ու ցելա։ Ձալալօղլում առանձին ուշադրութեան արժանի ոչինչ չկայ, եղածն էլ տեսել ու նկարագրել կնք Թիֆլիզիցի—Սանահին գնալիս։ Որոշում ենք սպասել մինչև երեկոյ և դրադուս ենք մեր ազգականներին, մերձաւորներին ու ընկերներին նամակներ գրելով։ Բոլորիս ստորագրութեամբ երկու նամակ էլ գրեցինք մեր ճանապարհորդութեան պաշտպան երկու հոգաբարձուներին՝ իշխան Կոստանդին Բահրութեանին և պարոն Գէորգ Եւանդուկեանին՝ հետեւալ ըսկանդակութեամբ.

«Ներսիսեան դպրանոցի առաջին «գլխացական ճանապարհորդութեան» մասնակցողները յայտնում են Ձեզ իրենց անկեղծ շնորհակալութիւնն՝ իբրև մեր դպրոցական ուղևորութեան պաշտպանի և խնամակալի։ Ուղևորութեան մասնակցողներս մանրամասն դիտելով և նկարագրելով Սանահնու վանից հոյակապ եկեղեցական-պատմական հնութիւնները, ամսոյս 27-ին ուղևորուեցանք գէպի Ստրդեաց ձորը, Օձուն, Վարդաբլուր, սր. Սարգիս և այստեղից Լուռայ բերդը և Ձալալօղլի՝ մանրամասն դիտելով և նկարագրելով այդ տեղերում գտնուած ազգային-պատմական հնութիւնները։

Քարերադրաբար ամեն տեղ համակրանքով են ընդունում մեզ և հիւրասիրում՝ հայկական նահապետական սովորութեան համեմատ։ Ամենքս էլ առողջ ենք, եւանդով ենք ճանապարհորդում և դիտում մեր հայրենեաց անցեալ փառքի բեկորները։

Այսօր այստեղից ուղևորուելով պէտք է գնանք Գիւլաղարակ,

Կուրդան, Դսեղ, Արդուի, Իգաճատ, Հոռոմայր և ապա Օձունի վրայով կրկին Սանահին: Ընդունեցէք ուրեմն մեր սրտագին շնորհակալութիւնը. խնդրում ենք նոյնպէս թարգման հանդիսանալ դպրանոցիդ մեծապատիւ հաղարարձութեան առաջ:

Նամակներն տակ ամենքս ստորագրեցինք՝ մեր ախողոսներով հանդերձ:

Մինչև ճաշը սպասեցինք, բայց եղանակը չլսացաւ, ցիւրը չշորացաւ. և թէ ոտքով գնայինք՝ շատ կնեղուէինք. Դաստիարակը որոշեց մինչև Կուրդան, գիւղը ֆուրգօն վարձել. պ. Միհրանը, Ներսիսեան ուսումնարանի նախկին սանը, որ կարելու եղած ժամանակը միշտ սիրով օգնում էր մեզ, գնաց մի ֆուրգօն վարձեց: Ժամի 4-ին սրտագին շնորհակալութիւն յայտնելով մեր առաջնականներին՝ ֆուրգօն նստեցինք և երգելով ճանապարհ ընկանք: Մեզ ուղեկցում էր պ. Ե. Զոհրաբեանը, որի հետ ծանօթացել էինք Վարդաբլուր գիւղում: Ֆուրգօնը դժուարութեամբ էր տեղից շարժւում: Անցանք Նիկոլայեւկա գիւղի մօտով, որի դիմացը, ձորի գլխին երևում էին Լօռուայ բերդի ամերակները: Վերջին անգամ մեր աչքերը դարձրինք դէպի Գուգարաց աշխարհի մայրաքաղաքի մնացորդները և տխուր շարունակեցինք մեր ճանապարհը: Տեղ տեղ գիւղացիները վաք էին անում. անձրեկից հողը փափկել էր: Երեկոյ էր, երբ մօտեցանք Վարդաբլուր գիւղին. մեր «ֆուրգօնին» առաջարկեց այս երեկոյ մնալ Վարդաբլուր և վաղը գնալ Կուրդան. բայց մենք ի նկատի ունենալով, որ ընդամենը մի քանի վերստ է մնացել մինչև Կուրդան և Վարդաբլուր գիւղումն էլ արդէն կրկն գիշեր մնացել ենք՝ որոշեցինք շարունակել մեր ճանապարհը:

Մի փոքր անցնելուց յետոյ՝ ամպերն սկսեցին սաստիկ որոտալ, փայլեց կայծակը, երկինքը թնդաց և սարսափելի յորդանձրե սկսեց: Մութն է, բոլորովին ոչինչ չենք տեսնում. ձիերը դժուարութեամբ էին առաջ գնում և մի քանի քայլ հազիւ անելուց յետոյ՝ նորից կանգ էին առնում կամ կառքը քարի դէմ ընկնելով՝ բռայէներով սպասում էինք, մինչև որ սայլապանը կարողանում էր առաջ քշել: Մեզնից շատերն իջան, որպէսզի մի փոքր թեթեւանալով՝ կառքն արագ շարժուի, բայց այդ էլ չօգնեց: Մեր շուրջն այնպիսի խառն էր տիրում, որ ինչպէս ասում են. «մատդ մարդու աչք կտխէր, չէր տեսնէ»: Երբեմն երբեմն երկինքը կարծես պատուում էր և փայլակը լուսատւրում հորիզոնը. ճանա-

ղարհը դժուարութեամբ էր որոշում և եթէ փայլակի լոյսը չլինէր, շատ կարեւր է մոլորութիւնք: Թայց ահա լուսինն ևրեաց ամպերի տակից, ամենքս ուրախ բացազանչութիւններով ողջունեցինք նրան և համարեա թէ բոլորս էլ իջանք կառքից. սակայն մի բռնակցի յետոյ լուսինը նորից ծածկուեց մթազոյն ամպերով: Գրկին լսելի եղաւ որոտման ահաղ դղրդւանը և անձրելւ նորից սկսեց հեղեղի նման թափուել մեր գլխին. մենք էլ ճանապարհ չենք հարցնում, սրտեղ պատահում է ոտներս կոխում ենք և երբեմն էլ ընկնում ցեխախառն ջրի մէջ ու նորից վերկենում, դուարճանալով առաջ գնում. մէկ էլ տեսար մէկի տրեխը մնաց ցեխի մէջ. հիմա արի ու հանիր...: Փութգօնի մէջ նստողներն էլ լաւ օրի չէին. սաստիկ կաթում էր ներքը և անձրեկից ոչ պակաս դրշում մէջն եղողներին: Դիւղի աների երեսը դէպի ձորը դարձրած լինելով՝ լոյս էլ չէր երևում, որ իմանայինք գիւղի մօտիկ լինելը: Մեծերիցս մի հինգ հագի, ձեռնափայտերը ձեռքերնիս, առաջ ընկանք և շուտով կանգ առանք գիւղի ծայրին և ձայն տուինք: Մեր ձայնի վրա դուրս եկաւ մի հասակաւոր գիւղացի և առաջնորդեց մեզ դէպի Տէր-Յփրեմի տունը: Տէր-հայրը, որ արդէն քնելու էր պատրաստւում, շապկանց դուրս եկաւ և իմանալով մեր գալուստը, իսկոյն մոմ վառել տուեց և ուրախութեամբ ընդունեց մեզ. յետոյ լսելով մեր ֆութգօնի պատմութիւնը, իր որդուն պատուիրեց իսկոյն ընդառաջ գնալ և ուղիղ ճանապարհը ցոյց տալ:

Վերջապէս ժամի 8-ին բոլորս դրշուած և ցեխոտուած հաւաքուած էինք մեր դաստիարակի շուրջը, որ պատուիրեց բոլորին, իսկոյն հանել բոլոր զգեստները և նոր սպիտակեղէն հագնել: Մեր բողբոջն էլ՝ այդ օրը քահանայի տանը հաց էին թխել և թոնիրը վառած էր. շրջապատեցինք թոնիրը և չորացրինք մեր թաց զգեստներն ու վերարկուները: Տէրտէրի ամբողջ ընտանիքը ոտքի էր կանգնել և օգնում մեզ, բացի երեցկոնջ հայր ծերունազաւր քահանայից, որ շարունակ անկողին էր ծառայում: Այն սենեակը, ուր մենք տեղաւորուել էինք, քարից էր շինուած. յատակը հող և պատերն առանց սուաղի. միայն մի ցածլիկ պատուհան ունէր, այն էլ առանց ապակու: Երկու կողմից շարուած սիւները պահում էին առաստաղը. մի կողմը դրուած էր հայկական հին թախտը՝ գորգերով ծածկուած, միւս կողմում դարսած էր «տեղաշորերը». պատից կախուած էր մի հին «այնալու» կոշուած հրացան, իսկ պատի մէջը՝ գիւղական տան անհրաժեշտ մասը, «օջաղը» կամ «բուխարին»: Այդ

սինեակից մի դուռը բացւում է դէպի թոնրատունը, որ նոյնպէս քարեայ ընդարձակ շէնք է, ուր գտնւում է թոնիրը, փուռը և դա-
նոդան հին կարասի: Միջանցքից մի դուռը բացւում էր դէպի գոմը:
Մեր զգեստները չորացնելուց յետոյ՝ մեծ ակոսքափակով թէյ
խմեցինք, հաց ու պանրով ընթրեցինք և պառկեցինք քնելու:

Արդուի, 2 օգոստոսի, ուրբաթ *):

Առաւօտեան ժամի 7-ին շնորհակալութիւն յայտնելով մեզ
հիւրասիրողներին՝ ճանապարհ ընկանք դէպի Արդուի՝ տանե-
լով մեզ հետ Դսեղից անջինջ ապաւորութիւններ և յիշողութիւն-
ներ: Երկինքը պարզ էր. արեւ բաւականին բարձրացել էր, լայց
դեռ կանաչ ու խիտ ցողաթաթախ խոտերը գրչում էին մեր ոտ-
քերը: Իջնում ենք ձորը և գիմում դէպի Քառասնից կողուած վան-
քը. կէս ժամից արդէն հասանք վանքը՝ քարերի ու քոյրերի միջով
ճանապարհ բաց անելով:

Քառասնից վանքը շինուած է Դսեղ գիւղի արեւմտեան կող-
մը գտնուող ձորի մէջ. այս սրբատաշ քարից կառուցուած տաճա-
րը կամարակապ է, կամարները հաստատուած են չորս կիսասիւ-
ների վրայ. կաթողիկէն ամբողջովին աւերուած է: Պատերից իւ-
րաքանչիւրի մէջ, կամարների տակ, կան մի մի լուսամուտներ.
բեմի աջ և ձախ կողմը գտնւում են երկյարկանի խորաններ, որոնց
վերին յարկի մուտքը բեմիցն է: Իւրաքանչիւր խորանի մէջ կայ
մի պատարագամատոյց սեղան: Եկեղեցու մուտքի ճակատին և
պատերի վրայ կան լաւաքանաչափ արձանագրութիւններ, որոնցից
երեւում է, որ վանքը երբեմն ունեցել է միաբանութիւն, ընդար-
ձակ կալուածքներ և այգիներ՝ զանազան իշխաններից նուիրուած:
Բեմից աջ կողմի խորանի ճակատին արձանագրուած է. (մա-
սամբ եղծուած):

«Ի թուին ՈՂ (690—1241) յիշխանութեան Աշոտայ և յա-
ռաջնորդութեան Յովհաննիսի եւ Դաւիթ... առաջի ընձարբը շի-
նեցին... զմատուռն և սպասաւորին սորա...»: Եկեղեցու մուտքի
ճակատին եղած արձանագրութիւնից երևում է, որ այս սրբավայ-

*) Այս ճանապարհորդութեան հինգերորդ և վեցերորդ օրուայ (յու-
լիսի 31 և օգոստ. 1) նկարագրերն արդէն տպուած է մեր ճննարխեան
գլխիցի սաների առաջին գլխիցական ճանապարհորդութիւնը՝ զբօսյկի
մէջ, ուստի և զանց ենք առնում այստեղ:

ընն օրհնուել է Հաղբատի Համադասպ առաջնորդի ձեռքով 26 թուին (705—1256):

Եկեղեցու երկարութիւնն է 12 արշ., լայնութիւնը 6 արշ. 10 վերջով, կամարների միջի տարածութիւնն է 4 արշ. 6 վ.: Կամարները խաչաձև կտրում են միմեանց և նմանում Սանահնի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, իսկ ընդհանուր ճարտարապետութիւնն ավելի նման է Յնէվանքին:

Եկեղեցու դիտողութիւնը վերջացնելուց յետոյ լարձրացանք ձորի միջից: Ճանապարհին տեսանք մի քարայր, որ ինչպէս նշաններից երևում էր, սկզբումը բաւականին ընդարձակ պէտք է լինէր. այժմ բաւականին ժայռեր ցած գլորուելով այլը կիսով չափ բաց է մնացել. ժայռերից մէկի վրայ փորագրուած էր մի խաչ: Քարայրը կոչւում է «ճգնաւորի այր» և այժմ ենթարկուել է բոլոր աղալիսի այրերի վիճակին, այսինքն դարձել է ոչխարների մահարայ և վայրի կենդանիների ուրջ: Այլն անցնելուց յետոյ հասանք ձորի գլուխը, որտեղ բարձր պատուանդանի վրայ մի խաչքար է դրուած: Այդտեղից ճանապարհներս շարունակեցինք դաշտերի միջով և սպա նորից իջանք սբ. Գրիգորի ձորը, անցանք աղբիւրի մօտով, վերջին անգամ հայեացքներս դարձրինք այդ հոյակապ սրբավայրերի և հրաշակերտ անբականների վրայ ու հառաչելով շարունակեցինք ճանապարհներս: Դտեղից մեղ ընկերակցող պ. Յ. Թումանեանն այստեղ բարի ճանապարհ մաղթելով մեզ՝ հրաժեշտ տուց և վերադարձաւ. մեզ հետ մնացին Հովուեան եղբայրները— երկուսն էլ ուսուցիչ: Օձապտոյտ շաւիղներով իջնելով անցանք «Քարնշայ ջուր» կոչուած գետակը և գնում ենք անտառի միջով մերթ իջնելով, մերթ բարձրանալով բլուրները, մինչև որ հասանք այգեհատ գիւղի «Տրէթուն» կոչուած ձորը, ուր կան բանջարեղէնների ագարակներ և ծխախոտի ցանքսեր:

Նոյն լեռնային գեղեցիկ ընութիւնը, նոյն պճնաղաղը անտառն իր խորհրդաւոր լուսեհամբ, նոյն անարկու հսկայական ժայռերը, նոյն լեռնային խոխոջուն վճիտ առուակներն ու աղբիւրները են դարձեալ նոյն վրդովուած, կատաղած, փրփրադէզ ակեր Զորագետը... Այստեղ «Փամբակայ ջուրն» ու «Ղարախաչի ջուրը» միանալով կազմում են Զորագետի ջրերը: Փամբակայ ջրի ձախ ափին բարձրանում են լեռնանման բարձր ապառաժները, որոնք սարսափ են ազդում մարդու վրայ:

Սգարակների մէջ փռուած են բաւականին քանակութեամբ

խաչքարեր, որոնցից մէկը հասարակ պարսպով շրջապատուած է, կոչուում է որ. Գիրախի և ուխտատեղի է. քարը փաթաթուած էր թեկերով, ղգեստտի կտորներով և մօտը խոռնկ ու մօմ դրուած: Այդ խաչքարից ոչ հեռու, մի ժայռի տակից բղխում է մի սառնորակ վճիտ աղբիւր, որ նոյնպէս սբ. Գիրախի է կոչուում: Ձորի մէջ, դետի ափին կային վարունգի «բօստաններ», որոնց մօտ և «բօստանչու» խղճալի որջանման բնակարանը. մի քանիսն հանգստացանք այդտեղ, մինչև որ «բօստանչին» մի քանի տասնեակ վարունգ քաղեց ու ծախեց մեզ վրայ:

Կէսօրից մի փոքր անց էր, երբ հասանք Ձորագետի ափը. աղեգակն այրում էր, իսկ մենք անհամբեր ուզում էինք հասնել կամրջին, որովհետև նախընթաց օրը ոմանք խորհուրդ չէին տալիս մեզ՝ անցնել այդ ճանապարհով և կասկածելի էին համարում այս փայտեայ կամուրջը. իսկ ոմանք էլ հակառակն էին պնդում և ի դուր չարչարանք համարում ահագին տարածութեամբ ճանապարհն երկարացնելը: Ցասնեչորս արշին երկարութիւն ունեցող և կատաղի Ձորագետի վրայ ձգուած երեքուն կամուրջի բաղկացուցիչ մասերն են՝ երեք գերան միմեանց կողքի և երկարութեամբ դարսուած, իսկ դրանց վրայ հորիզոնական ձևով ձգուած են փոքր փայտեր, որոնք ամրացրած չլինելով՝ շարժուն դրութեան մէջ են և անզգոյշ ու սխալ քայլը կարող է այդ փայտերը տեղահան անել և վրան վրան եղողի հետ ի միասին գետի կատաղի ալիքների մէջ ընկնել:

Բանջարանոցում աշխատող հայ գիւղացիներից մէկը շալակից մեր բեռն և անցնելու ժամանակ յանկարծ սխալ քայլ անելով՝ քիչ մնաց որ գլխի վայր ցած ընկնէր, բայց կարողացաւ հաստարակչութիւն պահպանել և անվտանգ անցաւ ու կրկին յետ եկաւ մեզ մօտ. մեզնից շատերը անսնելով այդ արկածը, վախեցան և դողդողալով ու գունատուելով անցան «մազէ կամուրջ»-ից. ոմանց էլ ձեռքը բռնած անցկացրինք, որովհետև ահագին գոռում գոչիւնով վազող գետը կամուրջի վրայից նայողին սարսափ էր ազդում, աչքերը «շաղում» և հաստարակչութիւնը կորցնել տալիս. այս հանգամանքն էր հահ երկիւղալին, եթէ ոչ կամուրջն ինքն ըստ ինքեան այնքան էլ վտանգաւոր չէր: Երբ ամենքս անվտանգ անցանք, կարծես մի ծանր բեռ ընկաւ մեր ուսերից. ցայժմ մեր ճանապարհորդութեան ընթացքում այսպիսի երկիւղալի դրութեան մէջ չէինք եղել: Դաստիարակը թէև ամեն կերպ խրախուսում և

քաշալերում էր մեզ, որ «սիրաներս պինդ պահենք» և աներկիւղ անցնենք, սակայն պարզ երևում էր, դժգոհ էր այս ճանապարհով գնալը խորհուրդ տուողներին:

Կամուրջն անցնելով՝ սրտանց շնորհակալութիւն յայտնեցինք մեզ օգնող գիւղացուն և դիմեցինք նեղ ու դժուարանցանկի շաւիղներով դէպի Քոջալը. բայց դեռ այդտեղ չհասած, Չորադետի ձախ ափին, ձորի գլխին, Այդեհատ գիւղից հարաւ՝ դիտեցինք մի փոքրիկ սազաշէն եկեղեցի: Այս եկեղեցու տանիքն արդէն հեռուից երևում էր անտառի միջից, թէև գմբեթ չունի, որմերն արտաքուստ և ներքուստ սրբատաշ քարից են շինուած, իսկ առաստաղը հասարակ քարից և կաճուկքով շինած: Տաճարն անսխիւռ կամարակապ է: Եկեղեցու տակը զանաւում է նոյն մեծութեամբ ներքնայարկ. այսպիսի երկյարկ եկեղեցի ուրիշ ոչ մի տեղ չենք տեսել: Ստորին յարկի մուտքը արեւելեան կողմից է, իսկ վերին յարկինը արեւմտեան կողմից. ներքին յարկի առաստաղը բաւականին տեղ քանդուած է չըջմուած և բացուածքի ձևով. վերին յարկն ունի 3 լուսամուտ՝ արեւելեան, արեւմտեան և հարաւային կողմերից, իսկ ներքինը ոչ մէկը չունի, որովհետեւ համարեն թէ դեռնի տակն է շինուած:

Տաճարի վրայ թէ ներքուստ և թէ արտաքուստ թէև ոչ մի արձանագրութիւն չկայ և յայտնի չէ թէ ով և երբ է շինել եկեղեցին, սակայն տեղացիներն անուանում են «21թախանց եկեղեցի»: Եկեղեցու երկարութիւնն է 8 արշին լայնութիւնը $4\frac{1}{2}$ արշ., բարձրութիւնը 6 արշ. 10 վերշ.: Չորջը կան տապանաքարեր վրացերէն «խուցուրի» կոչուած տառերով և ծածկադրերով: Եկեղեցու բեմն էլ յունականի նման է, ուստի կարելի է ենթադրել, որ սկզբումը հայոց եկեղեցի լինելով՝ յետոյ վրաց տիրապետութեան ժամանակ, յունական է դարձել:

Դիտողութիւնը վերջացրինք. յողնել ենք, մի փոքր էլ քաղցել, բայց այստեղ աղբիւր չկայ, որ ճաշենք. թէև արդէն ժամի 2-էն, արեւի կիղիշ ժամանակը, բայց խիտ անտառի մէջ լինելով՝ բնութիւնն ազատ ենք արեւի ջերմութիւնից: Մի փոքր էլ դնալով հասանք մի յորդառատ աղբիւրի, պարկներս ցած բերինք մեր ուսերի վրայից, հանեցինք մեր ճաշը, որ բաղկացած էր հաց ու պանրից և վարունգից և աղբրի ջրի հետ միասին մեծ ախորժափով ճաշեցինք:

Հանգստանում ենք և հեռուից նայում վանքին, որ արծուի

քնի նման կառուցուած է ժայռերի զլխին. ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէ լսուած այնտեղից. ախ՛աւ, տեսարան. մի ժամանակ չէն, հարուստ, պայծառ և հարկւրաւոր ջերմեռանդ կրօնաւորների ու հաղարաւոր երկիւղած ուխտաւորների երկինք բարձրացող հնչունների տեղ այժմ լսուած է երբեմն երբեմն միայն շարագուշակ բուր տուր ձայնը....:

Ճաշելուց և հանգստանալուց յետոյ զառիվայր ճանապարհով բարձրանում ենք դէպի Քորայր. ամբողջ զառիվայրը ծածկուած է վանքից թափուած, ահագին մեծութիւն ունեցող սրբատաշ քարերով: Մարդ տարապիւում է, երբ վերև նայելով տեսնում է այդ ուղղահայեաց ժայռերի վրայ կառուցուած Աստուծոյ տաճարը և մի փոքր էլ մօտենալով՝ դարմանում ապշում է, թէ մեր նախնիքն ի՞նչպիսի երկաթէ կամք և ջերմեռանդ հաւատք են ունեցել, որ այսպիսի ահեղ ժայռերի վրայ կառուցել են այսպիսի մի փառաւոր և հրաշակերտ վանք. ի՞նչպէս են կարողացել այսպիսի ահուհի տեղեր շինութեան նիւթեր վեր բարձրացնել—արդեօք նրանք են ամենակարող եղել, թէ բնութիւնն է փոխուել, ինչ որ այժմ տեսնում ենք այն ժամանակ ուրիշ տեսակ է եղել....:

Ժայռի վրայից սիրուն տեսարան է բացւում մեր առաջը. խորը ձորի մէջ ֆշշալով, ոլոր մոլոր անցնում է գետը, երևում է «Տրեթունայ» ձորը՝ իր ծխախտախ ցանքերով և «բօստամններով». միմեանց յետեից ահագին շարքերով կանգնած են անտառապատ, կանաչազարդ բլուրները: Վանքի հարաւային կողմն երևում է մի մեծ քարայր, իսկ դրա ձախ կողմը ահուհի անդունդի զլխին ապստամբների մէջ երևում է հասարակ քարից շինուած մուսքը, որի ներսը, ինչպէս ասում են մեծածաւալ այլ է և ժամանակով մէջը ահագին բազմութեամբ մարդիկ են պաշտպանուել վարենի թշնամիների յարձակումներից:

Այս ահուհի միայնութեան մէջ մէկ փոքրիկ ձայնն ահագին աղմուկ էր հանում, իսկ հրացան արձակելիս՝ այնպիսի մի դղրդիւն էր լսուած, որ կարծես թէ տափնեակ թնթանութներ են արձակել և բոլոր ապառաժները ցած թափել դէպի ձորը . . . : Սակայն սկսեմք մեր դիտողութիւնը:

Այգեհատ գիւղից ցած դէպի հարաւ Ձորագետի ձախ ափին, բարձր քարաժայռերի զլխին միայնակ լուռ կանգնած է Քորայր կիսաւեր և հրաշակերտ վանքը: Եկեղեցին կառուցուած է սրբատաշ, բայց ոչ այնքան մաքուր և լաւ քարից և ուղղակի անդուն-

զի բերանին լինելով՝ մի քայլ անելու անգամ տեղ չկայ՝ պատի ու ձորի մէջ։ Այս անսխիւ, կամարակապ գաճային առաստաղն այժմ բոլորովին աւերուած է, իսկ մնացածը կանգուն է։ Եկեղեցին կառուցել են Գիւրիկէ արքայի դուստրները՝ Մարիամն ու Ռուսուգանը։ Թէ՛ սրբան աշխատանք պէտք է թափուէր այսպիսի մի անուշիկ և դժուար մատչելի վայրում եկեղեցի կառուցանելու համար, ակնարկուած է տաճարի մուտքի վրայ եղող կամարածև դրան ճակատին գրած հետևեալ արձանագրութեանց մէջ։

«Քս. Ած. յիշեա ղՄարիամ և զՌուսուգան ի գալստեան քում»։

«Ե թուին ՈՒ (620—1171) ես Մարիամ դուստր Գորիկէի թագաւորի յազգէ Բագրատունի շինեցի զսուրբ կաթողիկէս աւանդութեամբ քուեր իմոյ Ռուսուգնայ յիշատակ. մեղ և ծնողաց մերոց և հաւաքուեր մերոյ Ռուսուգնայ և եղբօր մերոյ Աբասայ, որք երկրպագէք Քրիստոսի ի սուրբ քաւարանիս յիշեալիք, զի վասն նեղութեան տեղոյս շատ աշխատեցի»։

Եկեղեցու մուտքի աջ կողմի որմի մէջ եղած քարի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը։

«Թուին ՈՒՆ (635—1186) ես Խաչգունդս.....գնեցի զքրմիս այգին և ետու ի սուրբ կաթողիկէս վասն իմ հոգւոյս. առաջնորդով լինի սբ. եկեղեցւոյս պալտի ինձ տարին ր. ժամ որ խաիանէ իմ մեղացս տէր է առաջի Աստուծոյ ամէն»։

Հիւսիսային պատի վերայ կայ նոյնպէս մի արձանագրութիւն, բայց եղծուած լինելու պատճառով չէ կարդացուում։

Տաճարի երկարութիւնը, արեւելքից—արեւմուտք 7 արշ. 2 վ., լայնութիւնը 4 արշ. 11 վերշոկ։

Այս եկեղեցու հարաւային որմին կից շինուած է մի կամարածև փոքրիկ մատուռ, որի որմը նոյնպէս ժայռի գլխին է հաստատուած. մատուռի արտաքին պատերն եկեղեցու շէնքից աւելի ուշ են կառուցուած երևում. քարն էլ ուրիշ է։ Մատուռի առաստաղն ու պատերի մեծ մասն աւերուած են։

Արքայադուստրների կառուցած եկեղեցուց չորս արշինովէս հեռավորութեան վրայ, դէպի արեւմուտք, կանգնած է մի փոռահեղ, սրբատաշ քարից շինուած բարձր, ընդարձակ և սլրուն քանդակներով զարդարուած հոյակապ տաճար։ Եկեղեցու արեւելեան արտաքին որմի վրայ, որ ուղղակի վերոյիշեալ եկեղեցու դիմացն է, բարձր առաստաղի տակ գտնուում է գեղեցիկ քանդակներով

դարդարուած մի մեծ խաչ՝ նման Սանահնի դանդաղատան արեւմտեան կողմն եղած խաչին. այդ պատի վրայ կան նաև 5 լուսամուտներ: Այս հոյակապ եկեղեցու հիւսիսային որմին կցուած է մի ուրիշ եկեղեցի՝ առաջինից կիսով չափ ցածր: Մեծ եկեղեցուց մնացել են միայն արեւելեան, արեւմտեան և հիւսիսային որմերը, իսկ կաթողիկէն և ամբողջ հարաւային որմը քանդուած են և ինչպէս տեղացիք պատմում էին, 12 տարի առաջ եղած երկրաշարժից է ամենամեծ աւերումն առաջացել: Եկեղեցին շինուած է անսիւն, կամարակապ. ներսից սուաղուած է եղել և պատկերներ նկարուած: Նկարներէրց մնացել են բնմի և արեւելեան որմի վրայ եղող և մասամբ անձրեկից փշացած առաքելոց պատկերները. պատկերներէր վրայ գրուած է վրացերէն խուցուրի կոչուած տառերով: Եկեղեցու հիւսիսային որմի մէջ կայ մի խորան. իսկ հիւսիսային և արեւմտեան պատերի մէջ կան մի մի մուտք:

Եկեղեցու երկարութիւնը 22 արշ. 13 վ. է, լայնութիւնը (արտաքին որմից սկսած) 15 արշ. 7 վերջով:

Մեծ եկեղեցու հիւսիսային որմին կից կայ դարձեալ մի ուրիշ շինութիւն, որ ինչպէս երևում է յետոյ է աւելացրած և կամարակապ անկիւնաւոր շէնք է. կանգուն է մնացել միայն առաստաղի մի փոքր մասը, մնացածը բոլորն էլ տւերուած է. առաստաղն ինչպէս երևում է, հաստատուած է եղել սիւների վրայ, որոնք թափուած ածած են այժմ յատակի վրայ և վերնախարիսնեբի վրայ զեղեցիկ քանդակներ ունին: Այս շէնքը նմանուած է գաւթի:

Գաւթից դէպի մեծ եկեղեցին է տանում եկեղեցու հիւսիսային որմի վրայ գտնուած մի ընդարձակ և հոյակապ քանդակներով զարդարուած սիւնաղարդ մուտք, որի բարձրութիւնն է 3 արշ. 3 վ., լայնութիւնը 2 արշին: Մուտքի աջ և ձախ կողմերում կան 3 արձանագրութիւններ. երկուսը բաղկացած են հինգ-հինգ, իսկ երրորդը իննը տղից. բոլորն էլ գրուած են հին վրացերէն խուցուրի տառերով: Գաւթի արեւելեան կողմից գտնուած է մի երկրորդ մուտք՝ առաջինից աւելի գեղեցիկ քանդակներով զարդարուած. այս մուտքը բացւում է մեծ եկեղեցու հիւսիսային որմին կցուած եկեղեցու մէջ, որ նոյնպէս անսիւն է և կամարակապ շէնք է՝ առանց կաթողիկէի և սրբատաշ քարերից կառուցուած: Եկեղեցին ամբողջապէս մնացել է անվնաս. որմերը սուաղած են և վրան երևում են նկարների հետքեր. երկարութիւնն է 8 արշ. 9 վ., լայնութիւնը 5 արշ. 12 վ.:

Թէ մեծ և թէ նրան կից եկեղեցու բնակի կազմուածքից (որ շատ ցածր է և սկիհը դնելու տեղ չունի) երևում է, որ այս եկեղեցիները հայկական չեն: Կարելի է ենթադրել, որ կամ սկզբումը հայոց լինելով՝ յետոյ վրացիք իրենց ձեռքն են ձգել, կամ թէ չէ հէնց սկզբից վրաց ստճար է եղել. խի հայոց Քոթայք վանքը, որ յիշում է մեր եկեղեցական պատմութեան մէջ, գուցէ մեր նկարագրած և արքայադուստրները շինել տուած եկեղեցին է, որ միաբանութիւն ևս ունեցել է իր ժամանակին. եկեղեցական պատմութեան մէջ յայտնի է Քոթայքեցին, որ մասնակցեց Լօռուայ եկեղեցական ժողովին՝ շարժական սեղան ունենալու առթիւ:

Այս վառաշէն եկեղեցիներից որ հեռու, հիւսիս-արևմտեան կողմը կայ դարձեալ մի անսիւն, կամարակապ եկեղեցի, որի վրայ կառուցուած է կաթողիկէանման զանգակատուն գմբէթը՝ ութը սիւնների վրայ հաստատուած կամարների վրայ: Մուտքը հարաւային կողմից է. նոյն կողմը կայ և մի լուսամուտ. մի ուրիշ լուսամուտ էլ կայ արևելեան պատի մէջ, բնակի կամարի տակը: Եկեղեցու բնակ ցածր է և յատակի վրայ եղող տաղանաքարերի վրայ գրւած է վրացերէն խուցուրի տառերով. կամարների վրայ երևում են նկարների հետքեր: Հարաւային որմի արտաքին կողմից, մուտքի մօտ կայ մի ընդարձակ արձանագրութիւն, նոյնպէս խուցուրի տառերով գրուած: Զանգակատան կաթողիկէի խաչն ընկած է, չկայ:

Ձագակատանից նայողի աչքին հիւսնայի տեսարան է երևում. արևելեան կողմի ձորի միջով հոսում է Ձորագետը, հարաւային և արևմտեան կողմից կանգնած են սեպացած հսկայական ժայռերը, խի հիւսիսային կողմից անտառապատ լեռները. քարափների մէջ երևում են մի քանի մեծ ու փոքր այլեր: Օրը երեկոյանում էր, երբ այս տեսարանով հրճուելուց յետոյ՝ իջանք զանգակատնից՝ մեր զինուորականները շարունակելու:

Զանգակատան մօտ գտնուում է մի ընդարձակ կամարակապ, դահլիճանման շինութիւն, որի արևելեան և արևմտեան որմերի մէջ գտնուում են երեք-երեք ընդարձակ կամարներ, որոնցից արևմտեան կամարներից մէկը բաւական խորն է և կամարակապ խորանի ձև ունի, մէջը կան մի քանի դարաններ: Զինութեան առաստաղը և բոլոր կամարները, բացի մէկից, կանգուն են մնացել: Զէնքի ձևից կարելի է ենթադրել, որ միաբանութեան բնա-

կարան կամ սեղանատուն եղած լինի. շինուած է սրբատաշ քարից, երկարութիւնն է 17 արշ. 3 վ., լայնութիւնը 9 արշ. 12 վ., մէջը բուսել են ահագին մեծութեամբ ծառեր:

Քորայրի վանքը ծովի մակերևոյթից 900 մետր բարձրութեան վրայ է դնուում:

Մի քանի խօսք էլ ասենք վանքի հարաւային կողմը, ժայռերի մէջ գտնուող այրերի մասին: Այրերից ամենանշանաւորն է «Մղնախ» կոչուածը, որ նշանակում է արիութիւն, պատուաւան. սա ուղղահայեաց ժայռի մէջն է և դժուար մատչելի. տեսնողներն ասում են՝ որ այդ ահագին այրի մէջ հազարաւոր մարդիկ կարող են տեղատրուել: Յայանի է, որ քարայրները միակ թագաւորան տեղն էին անսպաշտպան մնացած և թշնամիների յարձակման ենթարկուած գիւղացիների. նրանք իրենց հետ բաւական զաւար վերցնելով՝ մի քանի օր և չարաթ կարողանում էին իրենց գլուխն աղասել ընդհանուր կոտորածից: Այս «Մղնախ» կոչուած այրի մասին էլ աւանդաբար հետեւեալն էին պատմում. լեզգիները արշաւանքներից մէկի ժամանակ մօտակայ ընակիչները գալիս և ապաւինում են այդտեղ: Լեզգիներն իմանալով այդ ամեն կողմից յարձակման են ենթարկում նրանցը, բայց ոչինչ չեն կարողանում անել—բարձրանալն էլ անկարելի է, վերջը ձորումն եղած ջրաղացականից մէկին բռնելով՝ օտիպում են յայտնել իրենց արի գաղտնի ճանապարհը. ջրաղացականն սկզբումն, ընդգիմադրում է, բայց վերջը տեսնելով որ իրեն մահ է սպառնում, կատարում է նրանց պահանջը և յայտնում քարայրի ճանապարհը: Լեզգիները բարձրանալով այլում են լսելու այնտեղ եղողներին: Մասնիչին էլ լեզգիները գլխատում են...:

Քորայր վանքից դէպի հիւսիս, նոյն դժի վրայ, շինուած է մի կամարակապ անսիւն և սրբատաշ քարերից շինուած եկեղեցի. սա ոչ զմբէթ ունի և ոչ արձանագրութիւն: Բնմի աջ կողմը, արևելեան պատի մէջ կայ մի պատարագամասոյց խորան՝ փոքրիկ ու կամարակապ մուտքով. եկեղեցու արևելեան հիւսիսային և հարաւային պատերի վրայ կան մի-մի լուսամուտներ. իսկ արևմտեան պատի մէջ եղած անցքը փակուած է: Մուտքը հարաւից է:

Այս եկեղեցու երկարութիւնն է 12 արշ. 4 վերջ., լայնութիւնը 5 արշ. 13 վերջ. և շինութեան ձևից պարզ նկատւում է, որ հայկական է: Եկեղեցու հարաւային որմին կցուած է մի կամարակապ շինութիւն, որ ինչպէս երևում է, ծառայել է գաւթի

տեղ: Գաւթի տրեւելան և հարաւային որմերը բաղկացած են երկերկու սիւների վրայ հաստատուած կամարներէ: Գուլթի երկարութիւնն է 8 արշ. 12 վ., լայնութիւնը 6 արշ.: Թէ եկեղեցին և թէ գաւթին ամբողջ են մնացել, սակայն անխնամ և ներսն աղբով լի: Եկեղեցու և գաւթի թէ մէջն և թէ շուրջը կան տապանաքարեր:

Այս եկեղեցուց էլ քիչ հեռու, դէպի հիւսիս, ձորի վրայ բարձրանում է մի ամուր, բարձր և բուրգերով պարիսպ, որի մուտքը կամարակապ է, շինուած է սրբատաշ քարից և 4 արշ. 10 վերջ. լայնութիւն և 7 արշ. 3 վ. բարձրութիւն ունի. պարիսպը ձգւում է արեւելից արեւմուտք: Մուտքը պարսպի ստորին ծայրի մօտ է. մուտքի ճակատին, կամարի տակ դրուած է մի մեծ քար, որի երկարութիւնն է 3 արշ. 6 վերջ., լայնութիւնը 1 արշ. 6 վերջով:

Վանքերն ունենալով սեպհական կալուածքներ, վարելահողեր, ոչխարի հօտեր, տաւար, միաբանութիւնը պէտք է հոգ տանէր այս բոլորի անվտանգ պահպանութեան համար. վանքերում էին ժողովրդի նուիրական սրբութիւնները, սուրբ մատուցները, որ պէտք է զգուշութեամբ պահուէին թշնամու ձեռքից ազատ մնալու համար: Այդ էր պատճառն ահա որ մեր վանքերը համարեա մեծ մասամբ, եթէ չասենք բոլորը, շինուած են անմատչելի տեղեր, կամ ապառաժների ու ժայռերի գլխին, կամ անդնդախոր ձորերի մէջ. նեղն ընկած ժամանակը՝ ժողովուրդն էլ այստեղ էր ապաստանարան գտնում: Քաբայր վանքն էլ ամեն կողմից ընկան ամբուլթիւններով սահմանազծած լինելով՝ հիւսիսային կողմից միայն դաշտ և անպաշտպան է և ահա այդ կողմն էլ շրջապատել են ամուր պարիսպներով ու բուրգերով՝ թշնամիների մուտքն արգելելու համար:

Ժամի $4\frac{1}{2}$ վերջացնելով պարսպի դիտողութիւնը՝ ճանապարհ ընկանք դէպի Այգեհատ գիւղը՝ ճանապարհը անտառի և ձորի միջով շարունակուած է մինչև Այգեհատի մօտերը. երեք քառորդի չափ գնում էինք խիտ անտառի խորհրդաւոր լուսեան մէջ. լուսեան ընդհատում էին մեր երգերն ու Քաբայրից ցած իջնող առուակը, որ մերթ ժայռերին դիպչելով, մերթ կանաչ խոտերի մէջ կորչելով, ընկերակցում էր մեզ: Լեռան լանջի վրայով գնալով՝ ուղիղ ձորին ենք նայում և անզգայ քայլը կարող է մէկին անդունդը գլորել. քարերն ու «մարդաշատի» խոտերը դժուար

բայցնում են արագ գնալը: Չորումն եղող այգիները գիւղի մօտ վերջանում, հատնում են և իբրև թէ այդ պատճառով էլ գիւղը կոչւում է Այգեհատ կամ Իգահատ:

Ուղիղ Այգեհատի ժայռերի տակ, Չորագետից բաւականին բարձր, գտնուում է մի քարաշէն կամարակապ եկեղեցի, որ անխախտ է մնացել: Առաջ պատարագ է եղել այգտեղ և ուխտաւորներ են դալիս եղել. այդպիսի պէտք է լինի իբրև թէ մի ճգնաւորի գերեզման: Եկեղեցու ներսը մութն է, որովհետև միայն երկու փոքրիկ լուսամուտներ ունի՝ արեւելեան ու արեւմտեան որմերի մէջ: Հիւսիսային պատի մէջ գտնուող դրան ճակատին կայ հետեւեալ արձանագրութիւնը.

«Յիշեան Քս. Ած. զՍամուէլ և զԾնողս իմ ի գալստեան քում. ի թուին Հայոց ՈչԲ»: (672—1223). Մուտքի ձախ կողմում արձանագրուած է.

«Ես Վաչէ իմ հոգւոյ պատրաստեցի եկեղեցիս և ետուն ինձ Ա. աւր ժամոց այտնութեան ու խափանէ իմ խղճիս տէր է»:

Հարաւային պատի վրայ գտնուում են նոյնպէս ուրիշ արձանագրութիւններ, որոնք համարեան եղծուած են ամբողջովին: Թէ եկեղեցու մօտ և թէ մի փոքր բարձր կան բաղմաթիւ խաչքարեր և պատուանդաններ. գուցէ գերեզմանատուն եղած լինի այստեղ:

Եկեղեցու երկարութիւնն է 7 արշ. 3 վ., լայնութիւնը 4 1/2 արշ. բեմը լայն է և բարձր, 3 աստիճանով:

Դիտողութիւնը վերջացնելով սկսեցինք բարձրանալ ձորի գլուխը և պատահեցինք մի սպիտակ խաչքարի: Այս խաչքարը պատկերաքանդակ է եղել, բայց այժմ մեծ մասամբ փշացած է. խաչքարի միայն վերին մասն է ամբողջ մնացել: Խաչքարի փշացած մասի վրայ զնդակների հետքեր են երևում. այդ մասին տեղացիք պատմում էին, իբրև թէ 40—50 տարի առաջ գիւղում մնացող կօղակների մի գունդ ժայռի գլխից նշան են դնելիս եղել և իրենց հմտութիւնը այդ սիրուն խաչքարը ծակոտելով ցոյց տուել:

Խաչքարի գլխին քանդակուած է Յս. Քս. բաղմած թախթի վրայ, ոտքերի տակ բարձ ունի դրած. Փրկչի աջ կողմը քանդակուած է սր. Աստուածածինը, Գաբրիէլ հրեշտակապետը և Պետրոս առաքելը. ձախ կողմից քանդակուած է Յովսէփը, Միքայէլ հրեշտակապետը և Պօղոս առաքեալը: Խաչքարի վերին ծայրերին գտնուում են Մատթէոս և Յովհաննէս աւետարանիչների պատկեր-

ները—երևի մնացած երկու աւետարանիչները պատկերներն էլ խաչ-
քարի ստորին ծայրերին են եղել քանդակուած: Վերոյիշեալ բոլոր
նկարների վրայ գրուած է նրանց անունները. խաչքարի չուրջն
ամբողջապէս արձանագրուած է եղել, այժմ կարդացուած է միայն
հետեւեալը.

«Ողորմութեամբ պարոն Գորգէի կանգնեցաք... բարեխաւ
լիս Դոօշին բախտաւ...»:

Խաչքարը գրուած է մի աւերած մասուռի սրմի մէջ և
կանգնած է կարծես իբրև լուս յանդիմանութիւն մարդկանց ա-
նարգ գործողութիւնների...

Այս խաչքարը սկզբում շատ փառահեղ ու հրաշալի պէտք է
եղած լինի:

Բարձրանում ենք դէպի Այգեհատ. մինչև քարափի առաւել, կէս
ճանապարհին շարուած են երկար նստարանաձև առափակ քարեր. այս
տեղը ժողովրդի բերանում կոչուած է «Դարեհանի Թորոն». իսկ
վերեն ուղղակի քաղաքի տակն եղող նոյնպիսի մի վայրը կոչուած
է «Հանգիստ». երկուսն էլ, ձորից բարձրանալիս, հանգստանալու
տեղեր են: Այդտեղից սկսած լեռ քարափի մէջ ոլոր մոլոր սան-
դղաձև փորուած շաւիղներով բարձրացանք ձորի գլուխը և մի
փոքր հանգստացանք: Գիւղի կողմից փչող քամին առատութեամբ
կալերի դարման է բերում: Բացի մի քանի երկյարկանի և սղ-
նուականներին պատկանող տներից, գիւղն ունի մօտ 20 տուն բը-
նակիչ, որոնք Լօռում յայտնի են իբրև «աղքատ—հալարտ այգե-
հատցիք»: Հանգստանալու միջոցին մեզ մօտեցաւ մի միջահասակ
մարդ՝ հնացած եւրոպական հագուստով և սպիտակ ուստակն
գլխարկով և սկսեց մեզ հետ խօսել մաքուր ռուսերէն լեզուով և
խմանալով որ հայ ենք, յետոյ սկսեց հայերէն խօսել, բայց նրան
տարօրինակ և ինքնուրոյն շարժումներից երևում էր, որ առողջ
դատողութեան տէր մարդ չէ. մեզ պատմեցին յետոյ, որ նա բժշ-
կապետ Քոչարեանի եղբայրն է և ուղեղի հիւանդութիւն ունի,
որ իբրև թէ առաջացել է նրա գլխին ծանր հարուած իջե-
ցնելուց...

Հանգստանալուց յետոյ բոլորս կարգի բնկանք և մեր սովո-
րական քայլերգով անցանք գիւղի մօտով և ուղեւորեցինք դէպի
Արդուի, ուր պէտք է գիշերէինք: Արեն արդէն մայր է մտել,
երեկոյեան զով քամին փչում է և ճանապարհներս էլ հարթ դաշ-
տի միջով. տրամադրութիւններս լաւ է և շարունակ երգելով ենք

զնում մի ժամուայ չափ ճանապարհը: Դաշտի մի կողմն արդէն հնձած է, միւս կողմն էլ դիւղացիներն «արին քրտինք» մտած աշխատում են և մեր երեւելուն պէս՝ մի մի խորձ չալակած վազում, զնում են առաջներս «աղա ձեզ փէշքէշ» խօսքերով և մի քանի կռակէ կոտանալով դո՛ւ վերադառնում և կրկին մանգաղը ձեռք առնում:

Մութն ընկել էր արդէն, երբ հասանք Արդուի, զինուորական կարգով անցանք գիւղի միջով և իջևանեցինք Տէր-Յովսէփ քահանայ Հովուհանցի տանը, որի մի քանի զաւակներն արդէն աւարտել էին իրենց ուսումը և որդեգիր եղել մեր դպրոցում: Միւրով ընդունուելով և իրիկունը ուրախ անցկացնելուց յետոյ ընթերցելիք և երկու մասի բաժանուելով՝ հանգիստ քնեցինք՝ նախապէս մեր յիշատակարանների մէջ նշանակելով օրուայ գէպքերի մասին նկատողութիւններ:

Օձուն, 3 օգոստոսի, շաբաթ:

Արեն արդէն բարձրացել էր և իր ակորժելի ջերմութիւնը տարածել ամեն կողմը, երբ ամենքս վերցնելով մեզ հետ միայն մեր վերարկուներն ու յիշատակարանները դուրս եկանք տանից— գիւղի շրջակայքը գիտելու. մեզ ընկերակցում էին հիւրընկալ Տէր-Յովսէփը և իր որդիքը:

Գիւղը, որ ընկնում է Չորագետի ձախ կողմը, Այգեհատից դէպի արևմուտք, սիրուն տեսք ունի. շրջապատուած է ծաղկաւետ և ջրառատ լեռներով. օդը զով և մաքուր, կարկաչաճոս և քաղցրահամ, աղբիւրներն առողջարար. մի խօսքով լաւ ամառանոցի տեղ է: Գիւղը պատկանում է Լօուու Մելիքեանների և Քալանթարեանների տոհմերին. Լօուու-Մելիքեաններն այստեղ կոչւում են «Տայի-նանք» և ծերերի ասելով՝ Յովհաննէս Օձնեցի Իմաստասէր կաթողիկոսի սերնդից են: Գիւղի հաստատուն ընտելիչներ թիւն ընդամենը իննը տուն է. զրանք պարտաւում են երկրագործութեամբ և խաշնարածութեամբ:

Արդուին ծովի մակերևոյթից 1020 մետր բարձր է գտնոււմ. երեք կողմից շրջապատուած է կանանչազեղ ու ծաղկաւետ բլուրներով, իսկ առաջը տարածւում է ընդարձակ դաշտավայրը: Գիւղի երկու կողմերը կան երկու փոքրիկ ձորակներ, որոնցից մէկը կոչւում է «վիշապաձոր», միւսը «Տայինանց ձոր». ունի 3 եկեղեցի, 3 էլ աւերակ: Այդ աւերակ եկեղեցիներից մէկը գտնւում է գիւղի

արեւելեան կողմը. ամբողջ է մնացել միայն դրա բեմի կամարը. այս աւերակին գիւղացիներն անուանում են «Պուճուր վանք». շինուած է եղել սրբատաշ քարից: Պուճուր վանքի մօտ մի պատուանդանի վրայ կանգնած է մի բարձր կոթող, որի 2 երեսի քանդակագործութիւնը նման է Դսեղ գիւղի գերեզմանատանը գտնուող կոթողին. բարձրութիւնն ու հաստութիւնն էլ համարեալ է նոյնն է, միայն սրա վերին մասից մի փոքր կտրուած է և աւելի փչացած. ոչ կոթողի և ոչ էլ պատուանդանի վրայ արձանագրութիւն չկայ:

Այդ կոթողից դէպի հարաւ-արեւելք գտնուում է մի ուրիշ աւերակ եկեղեցի, որին գիւղացիներն անուանում են «Կարմիր վանք» կամ «Քալանթարանց եկեղեցի»—երեկ այդ տոհմն է կառուցել: Եկեղեցին թէ տրտաքուստ և թէ ներքուստ շինուած է կարմրագոյն, փխրուն և սրբատաշ քարից, կամարակալ է և անսիւն: Առաստաղն ու կամարները քանդուած են, մնացել է միայն միջին կամարը որ նոյնպէս քանդուելու վրայ է. մուտքը հարաւային կողմից է, սրա սիւնն աւելի փխրուն քարից լինելով փչացել են: Եկեղեցու երկարութիւն է 10 արշ. 6 վերշ., լայնութիւնը 5 արշ., շուրջը կան բաղնաթիւ գերեզմանաքարեր՝ անճաշակ և տգեղ նկարներով: Մէկի վրայ օրինակ քանդակուած է մի կնոջ պատկեր՝ կրծքին մի երեխայ կալած. գլխին երկու կողմերը քանդակուած են կտուիչ և բէջ (գորգ դրծելու գործիքներ) մի ուրիշ տապանաքարի վրայ քանդակուած է մի այր մարդու պատկեր՝ կրծքին սուր և սաղ, իսկ գլխի 2 կողմերը գաւ և «հաղարփեշայ» և այլն: Թէև այս քանդակներն անարուեստ են, բայց որոշ գաղափարներ են արտայայտում և մի տեսակ պատկերազերեր են ներկայացնում. այդ քանդակներով իմանում ենք գերեզմանումն եղողի սեւը և մօտաւորապէս ինչ արհեստի կամ կոշման տէր լինելը—այդպիսի տապանաքարերի վրայ սովորաբար ոչինչ չէ գրուած լինում: Այդ սովորութիւնը մինչև այժմ էլ գործ է գրում շատ դէպքերում, օրինակ եպիսկոպոսների կամ քահանաների տապանաքարերի վրայ նկարում են խոյր, թաղ, խաչ, աւետարան, և այլն: Մեր դիտած վանքերից շատերում տեսել ենք տապանաքարեր առանց արձանագրութեան, բայց ի նկատի ունենալով վրան քանդակուած եպիսկոպոսական կամ վարդապետական գաւաղանը՝ իմացել ենք հանդուցեալի հոգեւոր աստիճանը:

Գիւղի հարաւային կողմը, վերոյիշեալ եկեղեցուց ոչ հեռու

քարուկրով շինուած է մի փոքրիկ եկեղեցի, որ կոչուած է «Տայ-նանց» և բոլորովին անտէր մնալով կիսաւեր է և կենդանիների աղբով լի: Եթէ հոգեւոր վարչութեան գործակալներն այնքան տգէտ և անփոյթ են, որ թոյլ են տալի այդպիսի աղեղ երեսոյթների առաջանալը, դո՛ւն այն իշխանութեան տոհմի անդամները, որի անունը կրում է եկեղեցին, այդ անպատուութիւնից ազատելու համար արգելէին Աստուծոյ տաճարը... ամաչում եմ ասել «խողանոց» դարձնելու...:

Վերոյիշեալ երեք աւերակ եկեղեցիները դիտելուց յետոյ ուղղուեցինք դէպի գիւղի հիւսիսային կողմը գտնուող «Վիշապածորը», որի միջով անցնում է մի առուակ: Ձորակի բլրի տակ քարափի մէջ ձգւում են օձապառոյտ կերպով երկու սե շերտեր, որոնք իրենց օձաձևութեան պատճառով առիթ են եղել մի աւանդական առասպելի ծագման. առասպելի մէջ, այդ շերտերը դառնում են երկու վիշապներ, որոնք «քարացել» են Յովհանն Օձնեցի և Իմաստասէր կոչուած կաթողիկոսի աղօթքով. այդ պատճառով էլ ձորն անուանւում է «Վիշապածոր»: Ահա այդ աւանդական առասպելի բովանդակութիւնը. «Մի օր այդ երկու վիշապները գալիս են ջուր խմելու ձորի միջովը հոսող առուից. այդ միջոցին բլրի գլխից անցնելիս է լինում մի կին կովկիթը գլխին. սա տեսնելով վիշապները, սկսում է իւր բոլոր ուժովը ծուլ ու աղաղակել: Այդ միջոցին Յովհանն Իմաստասէր կաթողիկոսն աղօթում էր եկեղեցում և լսելով կնոջ աղաղակները, իր աշակերտներից մէկին ուղարկում է տեղեկանալու թէ ինչ է պատահել. աշակերտը գնում է ձորը և վիշապների կեր դառնում: Գաթողիկոսը միմեանց յետևից ուղարկում է իր եօթն աշակերտներին և ամենքն էլ նոյն վիճակին են նստարկւում. կաթողիկոսը դարմացած դուրս է գալիս, տեսնում է վիշապներին և գործի էռկիւնն ըմբռնելով՝ անիծում է վիշապներին որ քար կտրուին՝ նախապէս հրամայելով՝ յետ տալ իր աշակերտներին. վիշապների փոքրերից դուրս են գալիս աշակերտները՝ սակայն մեռած: Ապա կաթողիկոսը գաւազանով խփում է վիշապներից մէկի պորտին և այնտեղից մի առողջարար աղբիւր է բխեցնում, որի ջուրը բժշկում է օձահարներին: Գաթողիկոսը անիծում է նոյնպէս իր աշակերտների դժբաղդութեան պատճառ եղող կնոջը և նա էլ կովկիթը գլխին քար է կտրւում. այդ քարը ցոյց են տալիս ձորի գլխին: Ձորակի գլխին եղած քարերից մէկն էլ աւանդաբար համարւում է եօթն աշակերտների դամբարանը և

կոչում «եօթը մօնթերի գերեզման»: Գլուցացիք այստեղ ուկստ են դալիս և ամեն տեսակ հիւանդներ հեաները բերելով խմեցնում են վիշապի պորտից հոտով ջրից կամ լուանում են նրանց վէրքերը:

Երևի, բացի այդ քարեայ օձապտոյտ շերտերից, աղբիւրի ջրի երբեմն ունեցած բուժիչ յատկութիւնն էլ նորա օգնել է այդ առասպելի բերնէ բերան անցնելուն. առասպելը չառ հին է երևում, որովհետեւ տասնեւերեքերորդ դարում արդէն յայտնի է եղել — Գիրակոս պատմագիրը խօսելով Յովհան Օձնեցու մասին, յիշում է այդ առասպելը:

Առասպելական «վիշապի պորտից» մենք էլ ջուր խմելով ճանապարհ ընկածք դէպի Յովհան Օձնեցի կաթողիկոսի դամբարանը, որ գտնւում է գիւղի հիւսիս-արեւմտեան կողմը:

Անցնելով պարսպի միջից և մտնելով եկեղեցու բակը մեզ դիմաւորեց մօտ 40 տարեկան մի մարդ, հեզ և համակրելի դէմքով, ուսերի վրայ առատութեամբ թափուած երկար մաղերով. մօրթէ գլխարկը գլխին, քոշերը ոտքերին, հասարակ լաստիկեայ արխաւուխը հագին և վրան կապած հասարակ կտորից գօտի: Այդպէս ներկայացաւ մեզ մեր ժամանակակից «ճգնաւորը», որ գիշեր ցերեկ մնում է վանքում և արթուն պահապան է: Թէև առաջ վարդապետ միաբան է եղել միշտ այդ սբ. նշխարների պահապանը, բայց այժմ բացի այդ «ճգնաւորից» ոչ ոք չկայ:

Վանքը բաղկացած է մի անսիւն, կամարակապ, հասարակ քարով կռով շինուած եկեղեցուց, որ այժմ ծառայում է գիւղական եկեղեցու տեղ, և նրան կից մի նոյնպիսի խորանից, որի մէջ ամփոփուած են Յովհան Օձնեցի կաթողիկոսի աճիւնը:

Յովհան Իմաստասէր Օձնեցի կաթողիկոսը մեր եկեղեցական փայլուն աստղերից մէկն էր. նա, ինչպէս ցոյց է տալիս նաև Օձնեցի անունը, Տաշիրք կամ Լօռի գաւառի Օձուն գիւղիցն էր. մանկութեան հասակից նա աշակերտեց այն ժամանակի նշանաւոր և գիտնական վարդապետ Թէոդորոս Քութնաւորին: Օձնեցին օժտուած լինելով թէ ներքին և թէ արտաքին բարեմասնութիւններով շուտով հռչակ է ստանում ամբողջ ազգի մէջ իբրև հանճարեղ, իմաստուն, ճգնագետաց և առաքինի մարդ և ժողանդում է «իմաստասէր» նշանաւոր աիտղոսը: Ազգը գնահատելով Իմաստասէրի արժանաւորութիւնները՝ սբ. Գրիգորի յաջորդների շարքն է դասում նրան կաթողիկոս ընտրելով: Իմաստասէրը ստանձնելով այդ նուիրական պաշտօնը ամեն ջանք գործ է դնում եկեղեցին

Հայաստանեայց պաշտպանել օտար գալիքի դէմ և դարձան տանել իր հօտի ցաւերին: Նա եկեղեցական ժողով է գումարում Դուին քաղաքում գանազան եկեղեցական կանոններ է հաստատում և իր ճարտար լեզուով, խմաստուն հանձարով և սրբառաւ գրուածքներով կարողանում է մեր եկեղեցին աղանդաւորների որոգայթներէց ազատ կացուցանել: Իմաստասէրն իր հայրենի գիւղում մի փառաւոր եկեղեցի կառուցանելուց յետոյ քաշուած է Արդուի և այժմեան մեր դիտած վանքում առանձնանալով՝ ճշնութեամբ է անցկացնում իր կեանքի վերջին օրերը:

Ներս մտանք և զգացուած ու պատկառանքով խոնարհելով այդ սուրբ մարդու դամբարանի առաջը, համբուրեցինք սբ. խաչը, հողերը համեստութեան և քրիստոնէական հեղութեան այդ յաւատենական արձանը: Այո, մեծափառ և հրաշակիրս արձան չէ դրուած ամբողջ ազգի սիրելի և հանճարեղ հողերը պետի դամբարանի վրայ, սակայն մենք պատմութիւնից ծանօթ լինելով սբ. մարդու գործերի հետ, համեստ խաչն այդ ըտպէին ամենաշքեղ արձանից ու կոթողից աւելի մեծ ներգործութիւն ունեցաւ մեր մատաղ սրտերի վրայ...

Սրբի աճիւնն ամփոփուած է քարեայ դազաղի մէջ, որի կափարիչը անտաշ և կարմիր գրանիտեայ քարից է, իսկ դազաղը շինուած է սպիտակ քարից: Դազաղի և կափարիչի մի մասը զբտնուած է սբ. սեղանի տակ, որպէսզի անկարելի լինի տեղից շարժել. դազաղի ոտքերի կողմը դրուած է մի սև քարից շինած խաչքար: Դազաղի երկարութիւնն է 2 արշ. 7 վ., լայնութիւնը 13 վ. իսկ դազաղը պարսկակող խորանի երկարութիւնն է 6 արշ. 15 վերշ., լայնութիւնը 4 արշ. 10 վ.:

Եկեղեցու բնմի վրայ դրուած էր մի հին, ժանգոտած ու ծակ դանդակ և Յովհան Օձնեցու, միջակ մեծութեամբ, ձիթանկար պատկերը. դանգը գտնուել է վանքի պարտիզում, իսկ պատկերը մօտ 40 տարի առաջ նուիրել են Լօռու-Մեխլեքանները:

Դամբարանը պարունակող խորանի արևմտեան որմին կից գտնուում է մի կամարաձև շինութիւն կարմիր, սրբաասաշ քարից կառուցուած, որ եղել է խորանի առաջը կառուցուած և այժմ բոլորովին ավերուած նախկին եկեղեցու բնմը. այս բնմի միջլոցն է եղել սրբի աճիւնն ամփոփող խորանը մտնելու անցքը, որ այժմ էլ կայ. բնմի վրայ մնացել են վէմ քարը և սկիհի տեղը: Այս եկեղեցին բոլորովին ավերուելուց յետոյ է կառուցուել այժմեան եկեղեցին:

Եկեղեցուց ոչ հեռու, դէպի հարաւ, գտնուում է զանգակատունը, որի փոքրիկ կաթողիկէն կանգնած է վեց քարեայ սիւների վրայ. զանգակատան տակը կայ մի փոքրիկ սրահ, իսկ որմերի մէջ կան մի քանի խաչքարեր. շինուած է անտաշ քարից:

Եկեղեցու շուրջը կան բազմաթիւ գերեզմանաքարեր և մի կոթող՝ նման մեր տեսածներին, միայն աւելի աւելուած. կոթողի մի երեսի վրայ արձանագրութիւն է եղել, որ այժմ եղծուած լինելու պատճառով չէ կարդացում: Զանգակատան տակը կայ մի գերեզմանաքար՝ սև քարից չինած մի խաչարձանով, որի վրայ գրուած է. «Քս. բարեխաւս եպիսկոպոսին ի ԹՎին ՌՃԼԴ» (1134—1685), իսկ գերեզմանաքարի վրայ գրուած է. «Այս է տապան Մելիքայ Ամիրջանայ որդի Պաւլոս պարոն Տէր սր. Յովհաննու ծառայ»:

Զանգակատան արեւմտահարաւային կողմը կառուցուած է մի քարեայ ամբար. ամբարի կողքին երեւում են բնակարանի հետքեր. ամբարն այժմ գործածական չէ: Վանքը պատած է ցածր պարըսպով, որ շինել են տուել Լօռու-Մելիքեանները:

Վանքի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ, պարսպից դուրս եկանք և գնացինք արեւմտեան կողմը գտնուող գերեզմանատունը տեսնելու: Այս ընդարձակ գերեզմանատան մէջ կան բազմաթիւ կանգուն խաչքարեր, որոնց վրայի արձանադրութիւնները ցոյց են տալիս, որ մեծ մասամբ տասնեհինգ ու տասնեօթերորդ դարուցն են: Խաչքարերից մէկի գլխին քանդակուած է մի բազմագլխեան վիշապ, երկու կողքերին մի մի նիզակաւոր մարդիկ. խաչքարի վրայ գրուած է. «Թուին ՌԼԱ (1031—1582) սր. բարեխաւս է պարոն Մելիք որ ի Կեսարիա նահատակեցաւ ի Քս.»:

Վերջին անգամ մեր հայեացքն ուղղելով Խմաստասիրի նշխարները պարունակող վանքի վրայ և յիշելով անցեալ դարերում մեր նախնեաց կրած հալածանքն ու տանջանքները, աւելի ևս փայլուն կերպով ներկայացաւ մեր երեւակայութեան մէջ այդ հանճարեղ մարդու պատկերը և տպաւորուեց մեր սրտի խորքերում...

Վերադարձանք գիւղ, շնորհակալութիւն յայտնեցինք մեզ հիւրասիրող տէր հօրը և սովորական կարգով ճանապարհ ընկանք դէպի Օձոն, որպէսզի դիտենք ճանապարհի վրայ գտնուող և «Հոռոմայր» կոչուած վանքը:

Արդուից ժամի 12-ին ճանապարհ ընկնելով, կէս ժամից յետոյ հասանք ձորի գլուխը, ուր գտնուում է վանքը. վանքից Օձոն

էլ կայ դարձեալ մի կէս ժամուայ ճանապարհ:

Օձուն գիւղից դէպի հարաւ, Ձորագետի ձախ ափին, ձորի գլխին է կառուցուած Հոռամայր վանքը, որ երեք բաժանմունքից է բաղկացած: Միջին բաժանմունքը 4 խաչաձև կամարների վրայ շինուած մի անսիւն գաւիթ է, որի արևելեան որմի մէջ կան 3 սիրուն խաչքարեր: Դաւթի հարաւային և հիւսիսային որմերին կից գտնուած են երկու կամարակապ, անսիւն պատարագամատոյց խորաններ: Հարաւային որմին կից գտնուող խորանը շինուած է ամուր և սև սրբասառ քարից և անխախտ է մնացել, իսկ հիւսիսային որմին կից խորանը կառուցուած է կարմրագոյն քարից. առաստաղը քանդուած է և ունի մի կամարակապ ու սիւնազարդ զեղեցիկ գուռը:

Դաւթի երկարութիւնն է 6½ արշ., լայնութիւնը 5 արշ. 14 վ., կամարի բարձրութիւնը 3 արշ. 14 վ.: Հիւսիսային խորանի երկարութիւնն է 6 արշ. 6 վ., լայնութիւնը 3 արշ.: Հարաւային խորանի երկարութիւնն է 6 արշ. 7 վ., լայնութիւնը 3 արշ. 8 վերջով:

Հարաւային խորանի մուտքի վրայ կամարաձև գրուած է հետեւոյ արձանագրութիւնը.

«Ե թուին ՈԾԵ (655—1206) ի թագաւորութեան Լաշային յամիր սպասալարութեան Զաքարէի և որդւոց իւրոց Ջահնշահի և եղբար իւրոյ Իւանէի, ես հայր Սամուէլ և այլ միաբանքս շինեցաք զեկեղեցիս վասն յերկար կենդանութեան պատրոնաց մերոց յիշատակ հոգւոց մերոց և ծնողաց մերոց, որք երկրպագէք մեզ յաղաթս յիշեցէք»:

Հարաւային որմին կից գրուած է հետեւալը.

«Ես Դաւիթ զիմ հոգոյ պաշար ի սուրբ Նշան ետու և Սամուէլ և այլ միաբանքս ետուն ինձ Ա. աւր ժամ ի Դաւիթ մարգարէի տանին ով խափանէ իմ մեղացս պարտական է առաջի Այ.»:

Հարաւային խորանի հարաւային որմի վրայ կայ դարձեալ մի արձանագրութիւն թէ՛ խաչգոմի անունով մէկը միաբանել է սր. Նշանին և տուել բ. օրալար հող, ծ. դահեկան և իր հոգւոյ պաշարը:

Այդ վանքից ներքև, ուղղակի քարափի ստին է սր. Նշանը, որ մեծ ուխտատեղի է և ամեն տարի մեծ բազմութիւն է գալիս այստեղ. արդիւնքը սկզբում ներսիսեան դպրոցին է եղել, իսկ յետոյ յատկացուել է Օձուն գիւղի երկդասեան ծխական ուսումնարանին:

Ձորի գլխից իջնելով ժայռի մէջ փորուած օձապառոյտ սանդուխաներով՝ տեսանք երկու սիրուն, սև քարից շինուած և պատուանդանների վրայ կանգնած խաչքարեր. մի փոքր էլ առաջ գնալով՝ կանգ տուանք մի մեծ, ընդարձակ, կամարովկապ, անսխւն և սրբաստաշ քարից շինուած եկեղեցու առաջ, որի առաստաղը քանդուած է և միայն պատերն են մնացել ամբողջ: Բեմը սուղղած է և վրան երեւում են նկարների հետքեր. բեմի կամարի վրայ կարգալինք հետեւեալ արձանազրութիւնը.

«Կաճարն Այ. ես Իգնատիոս շինեցի զեկեղեցին վասն երկար կենդանութեան պատրոնաց... Թուին 2» (700—1251): Եկեղեցու հարաւային արտաքին որմի երկու քարի վրայ կայ հետեւեալ արձանազրութիւնը. «Ես Ջուղէ դուտոր Սարգսի Քալնջեցույ յաղգէն Մամիկոնեան միաբանեցայ սր. Նշանին և ետու զիմ հոգւոյ պաշարն հայր Սարգիս և միաբանքս և այն ի Թուին 2ՀԵ». (775—1326): Եկեղեցին երկու մուտք ունի՝ մէկը հիւսիսից, միւսը հարավից. բեմի տակն էլ կայ մի գաղտնի անցք դէպի ցած: Եկեղեցու երկարութիւնն է 15 արշ., լայնութիւնը 13 արշ. 4 վ.:

Հարաւային մուտքից դուրս գալով՝ տեսնում ենք մի կանոնաւոր, սրբատաշ քարից շինուած աշտարակի վրայ մի գմբէթաւոր զանգակատուն. աշտարակի ներսն եկեղեցի է՝ պատարսզամատոյց սեղանով: Հիւսիսային մուտքի առաջը կան մեծ մեծ տապանաքարեր: Արեւմտեան կողմն ուղղակի բնական ժայռն է՝ ծածկուած ամբողջապէս հայերէն արձանազրութիւններով, որոնք կտոր կտոր են և տասնեւյոթերորդ դարուց: Ամբողջապէս արձանազրութիւններով ծածկուած ժայռի երկարութիւնն է 8 արշ. 7 վերջոյ. արձանազրած մասի լայնութիւնն է 2 արշ. 13 վ.: Այդտեղ կայ նոյնպէս մի խաչքար, որ կանգնած է մի մեծ ու միապագաղ քարից շինուած պատուանդանի վրայ. պատուանդանի երեք կողմերն էլ լի են արձանազրութիւններով: Այս արձանազրութիւնների տեղն այժմ ծածկուած է փայտեայ ծածկով և մի սրահանման շէնք է ներկայացնում: Այս սրահի հարաւային կողմն է դրանում զանգակատան տակն եղող եկեղեցու մուտքը, որ շինուած է քանդակագործ, սիւնաղարդ կամարաձև սրբատաշ քարից. մուտքի գլխին քանդակուած է Փրկչի պատկերը, որ աջ ձեռքով խաչակնքում է, իսկ ձախ ձեռին աւետարան ունի բռնած: Մուտքի աջ և ձախ կողմը կան քանդակուած հրեշտակներ՝ ձեռքերին խաչ բռնած: Ներսը կան երկու խորաններ՝ պատարագամատոյց սեղան-

ներով. խորանների ներսը մուխն է՝ միմիայն արևելեան պատի մէջ մի հաստ լուսամուտ ունենալու պատճառով: Առաջին խորանն արևմտեան կողմից ունի մի փոքրիկ խորան՝ ժայռի մէջ. այս խորանի երկարութիւնն է 5 արշ., 11 վերշ., լայն. 4 արշ. 13 վ.: երկրորդ խորանի երկարութիւնն է 7 արշ. 4 վ., լայն. 4 արշ. 2 վ.:

Ջանգալատան երկրորդ խորանին կցուած է նաև մի երրորդ պատարագամատոյց խորան, որ սրբատաշ քարից է և ամբողջ է մնացել. խորանի արևմտեան որմի մէջ է մուտքը, որի դիմին կամարաձև արձանագրուած է հետեւեալը.

«Թուին Ո՛՞ (650—1201) ես Սարգիս և Զաքարէս որդիք Յակոբայ Խալինայ մայր մեր շինեցաք զեկեղեցիս յիշատակ հոգւոց մերոց ի հայրութեան Սամուէլի և ետուն մեզ աղ ու հացից կերակէն զմեր եկեղեցոյս ժամն մեր տունին, որ խափանէ դատի յԱյ. և մեր խղճիս տէր է. ամէն»:

Խորանի մուտքի մօտ կայ մի քարաշէն ամբար և ժայռի տակ փոքրիկ այրեր: Խորանի արևելեան և հարաւային որմերը լի են արձանագրութիւններով: Եկեղեցուն կից, դէպի հարաւ, ուղղակի ժայռի մէջ կան մի քանի այրեր, որանցից մի քանիսը պարիսպներով պատած են եղել: Դրանց մէջ աչքի է ընկնում մի այր, որ ժայռի վրայ դուռն էլ ունի, բայց անյայտ է թէ ինչպէս և ո՞ր կողմից է եղել մուտքը. այդ այրն է համարւում յունաց Վասիլ կայսեր ճգնարանը. ըստ պատմական աւանդութեան յունաց Վասիլ կայսրն իր զօրքով գալիս է հայերից վրէժխնդիր լինելու, բայց սաստիկ հիւանդանում է և դիմելով Յովհան Օձնեցու օգնութեանը՝ նրա աղօթքով աւուղջանում է: Այդպէս հրաշքով մահից աղատուելով՝ կայսրը կրօնաւորի զգեստ է հագնում ու ճգնում է տօստեղ մի այրի մէջ, մինչև իր մահը. այդ պատճառով ահա իբրև թէ այս վանքը կոչւում է Հոռոմ-այր, այսինքն հոռոմի, յոյնի այր. վանքի այս անունը յայտնի է այստեղ միայն Օձունցիներին—ամբողջ Լօռին այս վանքն անուանում է սբ. Նշան:

Ութերորդ (տասնեւսրսերորդ) դարում այս վանքը յիշւում է իբրև մեր նշանաւոր ուսումնավայրերից մէկը:

Վանքը շինուած է ապաւաթ ժայռերի մէջ, ձորի մէջտեղից մի փոքր վերև և ծովի մակերևոյթից 1100 մետր բարձրութիւն ունի:

Վանքից ներքև, ձորի մէջն է «Թնդոց» կոչուած աղբիւրը. աղբիւրի ջուրը կաթկալւում է ժայռից և երևի այդ հանգամանկի

շնորհին է իր անունը ստացել: Ձորի մէջ կայ սրբատաշ քարից շինուած մի փոքրիկ մատուռ, որ մասամբ աւերուած է: Նոյնպիսի մի փոքր մատուռ էլ կայ զանգակատան առաջը, անտաշ, մանր քարերից շինուած. մէջը դրուած է մի խաչքար. քարերը ծածկուած են ջերմեռանդ ուխտաւորների բերած թերևրով, փալատնեւրով և վառած մոմերի հետքերով: Լօռու ամեն կողմերից շարունակ ուխտաւորներ են գալիս և օծապառայա շաւղով, ժայռերի միջով բոկոտն գնալով և իրենց ցաւերը յայտնելով սբ. Նշանին՝ նրա ցօրութեամբ բժշկութիւն են հայցում և խոստումներ անում...: Մեր իջնելու միջոցին բարձրանում էին մի քանի բոկոտն կանայք. մէկը նրանցից գրկած ունէր մի հիւանդ երեխայ. կանանցից մէկը հարցրեց մեզ. «Նկ էք գնում» և երբ մեր պատասխանը լսեց, հոռաշանքով աւելացրեց. «Ձեր մայրերի ջանը դուրս գայ, որ ձեզ թողել են ըտէնց պատիկ սալդաթ տանեն թագաւորին»:

Մեր դիտողութիւնները վերջացնելուց յետոյ, ճաշեցինք, «Թնդոցի» սառնորակ ջուրը վաւելցինք, մի փոքր հանդադարեցինք և նոյն օծապառայա սանդուխտներով կրկին բարձրացանք վերև, ձորի գլուխը:

Կէս օրից անցել էր Յ ժամ. թէեւ արեւ դեռ փայլում էր, բայց կամաց կամաց հրեկոյեան հովը ավրապետող հանդիսացաւ. ներքեր, անդնդախոր ձորի մէջ, ոլոր մոլոր սահում է Ձորագետը, վերքեր մէկ կողմից անտառապատ, կանաչագեղ բլուրներն են չընաղ տեսարան ներկայացնում, միւս կողմը սկզբով արտերն են մեղմ քամուց ալիքանման ծածանւում: Բոլորն ուրախ տրամադրութեամբ և շնորհակալութիւն յայտնելով՝ հրաժեշտ տուինք մինչև այստեղ մեզ ընկերակցող պ. Սիմ. Հովուեանին և նուագելով ու երգելով, շուտաքայլ ընթացքով դիմեցինք դէպի Օձուն. կամ Ուղունլար գիւղը: Չարաթ երեկոյ լինելով՝ գիւղացիները սովորականից շուտ էին վերջացրել իրենց աշխատանքը. նրանք լսելով մեր թմբուկների ձայնը՝ խմբերով հաւաքուեցան մեր շուրջը և հետևում էին մեզ. մի տան առաջով անցնելիս՝ պարզ լսեցինք մի պառաւ կնոջ հետեւալ խօսքերը. «Ձեր թուրը կարուկ լինի, բալէք»: Այս խօսքերը թէեւ մեր ծիծաղը շարժեցին, բայց և այնպէս հաճելի թուացին մեզ...: Երգելով հասանք մինչև «Կընդընարար» (կենդանարար) լողբիւր, սառնորակ ջրից կուշա խմեցինք և դիմեցինք դէպի Կեղեղցին ու սկսեցինք մեր դիտողութիւնները:

«Օձունի «Խաչգունտ» կոչուած եկեղեցին ամենից հինն է մեր

տեսածներէց. շինել է Յովհանն Իմաստասէր կաթողիկոսը հայոց ճԶԴ (184—735 Փրկ.) և նրա անունով էլ կոչուած է նոյնպէս Յովհանն Օձնեցու եկեղեցի: Եկեղեցին թէ զբսից և թէ ներսից լաւ տալաւորութիւն է թողնում, միայն թէ շինութեան ձևը յունականի նմանութիւն ունի. կառուցուած է մանր և ոչ այնքան սրբատաշ դեղնազոյն քարից. միայն քառանկիւնու ձև ունեցող սիւններն և կամարներն աւելի խոշոր և սրբատաշ քարերից են: Եկեղեցին հաստատուած է 4 աղատ սիւների և 2 կիսասիւնների վրայ, որոնք դանւում են արեւմտեան և արեւելեան որմերում. ունի չորս կամարներ, որոնցից 2 լայն են, (արեւելեան և արեւմտեան) և երկուսը նեղ (հարաւային և հիւսիսային): Երեք մուտք ունի, հարաւային, հիւսիսային և արեւմտեան կողմերից. լուսաւորւում է կամարների տակ դանւում չորս լուսամտաներով. կաթողիկէն ունի նոյնպէս 4 լուսամուտ: Բեմի աջ և ձախ կողմը կան երկյարկանի խորաններ. երկրորդ յարկի խորանները մուտք չունին, բացի մի լուսամտից, որով պէտք է մուտք գործել խորանը շարժական սանդիւտի օգնութեամբ: Արեւմտեան մուտքի աջ և ձախ կողմը ընդարձակ կիսասիւնների մէջ կան մի մի մեծ անցքեր, որոնց գլխին դարձեալ ուրիշ փոքրիկ անցքեր. երեւի այդտեղ եղել են փոքրիկ խորաններ, որ վերանորոգութեան ժամանակ բացուել են, իսկ խորանների վրայ եղել են գաղտնարաններ, որոնց մէջ և բացուելիս են եղել յիշեալ փոքրիկ անցքերը:

Այս եկեղեցին Լօռուայ ամենաընդարձակ տաճարներից մէկն է. երկարութիւնն է 36 արշ., լայնութիւնը 15 արշ. 13 վ., մեծ կամարների միջի տարածութիւնը 6 և կէս արշ. սիւնների և որմերի միջի տարածութիւնը 2 արշ. 4 վ., կամարների բարձրութիւնը է 17 արշ. 1 վ. կաթողիկէի բարձրութիւնը չկարողացանք չափել՝ յարմարութիւններ չունենալու պատճառով:

Սիւններից մէկին կպած մարմարիոնի քարի վրայ ոսկեզօծ տառերով գրուած է հետեւեալը.

«Յամի Տեառն 1888 յամսեանն հոկտեմբերի միջ Զաքարիա և Բաղդասար եղբարքս Արովիանց վերանորոգեցաք սոյն չքնադաշէն Խաչզունտ կոչեցեալ եկեղեցիս զեղջս Օձնոյ հայրենեաց մերոց արդեամբք մերով, ըստ Աստուածահաճոյ փափագանաց և պատուիրանի բարեխնամ և գթաւատ մօրն մերոյ Եղիսարէթի ի յիշատակ նորա, հօրն մերոյ Կարապետի, և եղբօրն Գէորգայ՝ հանգուցելոյ ի Տէր»: Այս արձանագրութիւնից քիչ ցած գրուած է.

«Նկեղեցիս այս կառուցեալ է յամի Տեառն 735 ի հայրապետէն Տեառն Օհաննու Օձնեցոյ Իմաստասիրէ»:

Այժմ դիտեցինք արտաքուստ:

Տաճարի արևմտեան դուռն ամենեց զեղեցիկն է, չորսըզ զարդարուած է նուրբ և գեղեցիկ քանդակներով, իսկ մուտքի ճակատին կան նուրբ քանդակուած պատկերներ և արձանազրութիւն: Նոյնպիսի քանդակուած պատկերների հետքեր երևում են հիւսիսային և հարաւային սրմբում գտնուած լուսամտաների վրայ: Որմերի վրայ եղած արձանազրութիւնները մեծ մասամբ եղծուած են: Նկեղեցին հիւսիսային, հարաւային և արևմտեան կողմերից չըջապատուած է կամարակապ պարիսպներով, որոնք լինչպէս երևում է հետքերից, սկզբում պէտք է գաւիթներ եղած լինին. այժմ առաստաղները բոլորովին քանդուած են. ահա այդ հանգամանքով էլ այս եկեղեցին տարբերում է Լուռայ միւս բոլոր տաճարներից, որոնք մի կողմից միայն գաւիթ ունին, բացի Յնէվանք կոչուածից, որ երկու կողմից գաւիթ ունի:

Նկեղեցու արևելեան կողմից կցուած է փոքրիկ դանգակատունը երկու կաթողիկէներով: Նկեղեցու չորսըզ գերեզմանատուն է. տղտեղ եղած խաչքարերից մէկի վրայ կտրուացում է 2փէ (717—1268) թուականը:

Խաչգունտ եկեղեցու հիւսիսային կողմը, մօտ 15 արշին հեռաւորութեան վրայ շինուած է մի բարձրաշէն, փառաւոր և կոթողանման արձան: Արձանը բաղկացած է երեք քառանկիւնաձև մեծ սիւններից, որոնք կանգնած են պատուանդանի վրայ. պատուանդանի արևմտեան կողմից սանդուխտներ կան: Երեք սիւնները վերևից միմեանց հեռ միացած են երկու փոքրիկ կամարներով, որոնք այժմ մասամբ քանդուած են. այդ փոքրիկ կամարների տակը կանգնեցրած են մի մի միապաղաղ մթազոյն քարից շինուած կոթողներ, որոնց չորս կողմերն էլ քանդակուած են զարմանալի նրբութեամբ փորագրուած պատկերներ և նկարներ: Սրանք էլ նման են Դսեղի և Արդուի կոթողներին, բայց աւելի նեղ են. ուշադրութեան արժանի են կոթողները վրայի նկարները, որոնք անպատճառ պէտք է խորհրդաւոր նշանակութիւն ունենան. Դժբաղդաբար մենք երկար ժամանակ չունեցանք՝ մանրամասն դիտելու և նկարելու այդ փառահեղ կոթողը, մեր նախնեաց հրաշակերտ զործերից մէկը: Գոթողի վրայ արձանազրութեան հետք չկայ և յայտնի չէ թէ՛ երբ և ո՞վ է շինել. միայն աւանդաբար ասում են, որ կոթողի տակ

թաղուած է Սմբատ Բագրատունին: Երևի աւանդութիւնը մի պատմական հիմք ունի. եթէ Սմբատինն էլ չլինի, անկասկած է, որ մի արքայադէս կամ իշխանադէս անձի դամբարան պէտք է լինի:

Կոթողներն ուշադրութեամբ նայողը կտեսնի, որ սիւների տուրին և միջին մասերը մաշուած, քերուած են. այդ առաջացել է մեր գիւղացիների սնտախաղաշառութիւնից, որոնք քերելով այդ հրաշալի սիւների քանդակները՝ իբրև հիւանդութեանց բուժիչ միջոց են գործ դնում. այդպիսով հեազհետէ այդ սիրուն քանդակները կարող են քերուել, պէտք է արգելել այդ. բայց ինչը կարող է արգելք լինել մեր ագէտ գիւղացիների սնտախաղաշառութիւնից առաջացած այդ արարքին, քանի որ եւրոպական դարաւոր լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւնը դեռ ևս չէ կարողացել արմատախիլ անել նոյնպիսի սնտախաղաշառութիւնները և ջերմանով բողբոջական գերմանացիները շարունակ քերում են Վարթապետի ամրացումն եղած Լուսերի բնակուած սենեակի մի անկիւնի թանաքոտ հողը՝ հաւատալով որ այդ թանաքը Լուսերի այն կոտրած թանաքամանիցն է, որ նա չալտեց սատունայի վրայ...:

Արձանի պատուանդանի շրջագիծն է 25 և կէս արշին, բարձրութիւնը 5 արշին, սիւների բարձրութիւնը մօտ 10 արշ., իսկ կոթողները մի փոքր ցածր են—շարունակ սեղացող անձրեր խանդարեց մեղ մանրամասն չափելու այս արձանը:

Օձունը ծովի մակերևոյթից բարձր է 1000 մետր:

Արևն արդէն խոնարհուել էր դէպի իր մուտքը, երբ ճանապարհ ընկանք դէպի մեր մշտական իջևանը, Սանահին. գալիս նոյն ճանապարհով անցել էինք առաւօտեան, երբ արևը դեռ նոր էր լուսաւորում ձորի մութ անկիւնները, այժմ նոյն սեղողն անցնում ենք, երբ երեկոյեան հեազհետէ թանձրացող մթազին քողը վարագուրում էր ամեն ինչ: Հասանք կամուրջին, բարձրացանք մեղ լաւ ծանօթ քարաժայռերի վրայի ոլոր-մոլոր պտոյտներով և արդէն դիւղի խրճիթներում ճրագի լոյսեր էին պսպղում, երբ երգելով մօտեցանք վանքի պարիսպներին: Սանահնում մնացած մեր փոքրիկ ընկերները վերակացուի հետ գլիմաւորեցին մեզ և ամենքս սրտի բուռն ղեացմանց արտայայտութիւններով թնդացնելով պարիսպները՝ ներս մտանք մեր օթեանը՝ ութնօրեայ ճանապարհորդութիւնից բերելով անյալիսի քաղցր իշողութիւններ, որ երբէք չեն ջնջուի մեր սրտի խորքերից: